№ 202 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 13 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

1912

ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 13 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ № 202

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆօն № 2—53.

# ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Տպարանի տելեֆօն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaktion du journal „MSHAK".

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1 ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 4 ՌՈՒԲԼԻ.

Սեպտեմբ. 1-ից մինչև հոկտ. 1-ը 85 կ. Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ. ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԻՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К°, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնօյում՝ Большая, 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՎՐԱՑ ԱԶՆՈՒԱԿԱՆՆԵՐԻ ԹԱՏՐՈՆ
ԵՐԵՔՇԱԲԹԻ, ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18-ԻՆ
Դերասան Յ. ՍՏԵՓԱՆԵԱՆԸ
մասնակցութեամբ դերասանների և դերասանուհիների
կը ներկայացնէ առաջին անգամ Թիֆլիսում անմահ վիպագիր ՐԱՖՖԻԻ հռչակաւոր գրուածքը
ՍԻՒՆԵԱՑ ԵՐԿՐԻ ԱՆՑԵԱԼԻՑ
ԴԱՒԻԹ-ԲԷԿ
Պատմական իրողութիւն 5 գործ., փոխադրութիւն Խ. Ցովէփեանի.
Այս սեզոնին կը ներկայացվի միայն մի անգամ:
3-րդ գործողութեան ընթացքում Դաւիթ-բէկի տանը քէֆ, սազանդար, վրացական պարեր.
Այս պիէսի համար պատրաստվում են նոր զգեստներ իր ժամանակի տարազով.
Տեղերի գները 3 ր. 50 կ.-ից մինչև 40 կոպ.
Տոմսակները արդէն վաճառվում են թատրոնի կասսայում՝ առաւօտեան ժամը 11—3-ը և երեկոյեան ժամը 6—8-ը ամէն օր.
Սկիզբն է երեկոյեան ուղիղ ժամը 8½-ին:
2—1 685. առ. (կ.) Ռեժիսոր՝ Յ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

Вышла изъ печати и поступила въ продажу книга
Положеніе о размежеваніи Закавказскаго Края
III изданіе, исправленное и значительно дополненное новѣйшими разъясненіями и приложеніемъ закона 26 мая 1897 г. о мѣрахъ къ ускоренію межеванія.
Составилъ К. В. ДОЛГОВЪ, членъ Тифлисской Судебной Палаты.
Цѣна 1 руб. 50 коп.
Складъ изданія въ Центральной Книжн. Торговлѣ (Тифлисъ Головин. пр.).
(օ.մ.) առ. 666. 5—4

ՓՈՐՁԵՑԷՔ ՄԷԿ ԵՒ ԿԸ ՀԱՄՈԶՎԷՔ
Ա
Ա Ն Ի
Ի
Պապիրօսներ «ԱՆԻ»
Պապիրօսներ Ակց. Ընկ.
«Մ Ի Ր» ԳՈՐԾԱՐԱՆԻ
15 հատը 6 կ., 25 հատը 10 կ.
Իրանց յատկութեամբ և անուշ համով գերազանցում են ուրիշ գործարանների ամէն թանգարժէք պապիրօսներից:
«ԱՆԻ» պապիրօսներ
(հ. կ.) առ. 676. 3—2

По умѣреннымъ цѣнамъ
Новѣйшихъ изящныхъ рисунковъ
ПОЛНОМѢРНЫЕ
ОБОИ
ФАБР. СКЛАДЪ
МАНГИКІАНА
ПУШКИНСКАЯ № 7.
(հ. կ.) 291. 50—37

ՕՐԻՈՐԴ ԹԱԴԹԱՃԵԱՆ
Վերադառնալով ամարանոցից՝ շարունակում է դասեր տալ դաշնամուրի վրա: Հասցէն՝ Грибоѣдовск. 13, кв. 7.
Կարելի է տեսնել առ. ժամը 10—12-ը:
(հ.կ.) առ. 632. 6—5

ԲԺԻՇԿ
Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Ներքին, երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւններ.
Պրոֆ. Mathieu-ի մասնագիտական կլինիկայից—Պարիզում.
Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11-ը; երեկ. ժ. 5—7-ը;
Միխայլովսկի պր. 86, տելեֆ. № 576.
(հ.հ.կ.) առ. 179. 100—31

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. ԿԷՕՆՃԵԱՆԸ
վերադառնալով ամարանոցից և տեղափոխվելով նոր բնակարան՝ վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը: Պլոմբ (ոսկեայ, արծաթեայ և այլն), ատամի հեռացումը առանց ցաւի: Կարելի է ստանալ արհեստական ատամներ: Ընդունել. ամէն օր առ. ժ. 9—2-ը և երեկ. 4—7-ը: Лермонтовская ул., № 1, подъѣздъ съ переулка.
(հ.հ.կ.) առ. 686. 4—1

## ՄԵԾ ԱՂԷՏԻ ԱՌԱՋ

Դեռ մի քանի օր առաջ մենք կարդացինք «Н. Вр.» թերթի մէջ, թէ Թիւրքիայում հայերը մեծ կոտորածի նախօրեակի առաջ են կանգնած:

«Մշակի» երէկվայ համարում արտատպված Եմ. Գ. Նազարեանցի հեռագիրը գուժում է, թէ համաձայն Դիարբէքիրի, Բիթլիսի և Մուշի թեմակալ առաջնորդների հեռագրերի՝ սպառնում է հայկական մասսայական կոտորած:

Մենք դեռ երէկ արտայայտեցինք այն, ըստ մեր կարծիքի, անհերքելի հայեացքը, թէ անմտութիւն է սպասել Թիւրքահայերի համար փրկութիւն և ազատագրութիւն Թիւրքական կառավարութիւնից, ով և լինի գլուխ կանգնած այդ կառավարութեան—«Իթթիհադ» կոչված կուսակցութիւնը, «Իթիլաֆ» կոչվածը, թէ մի այլ Թիւրք կուսակցութիւն:

Երբ Թիւրքիայում միահեծան բռնակալութեամբ իշխում էր գազանաբարոյ Համիդը, հայերը ենթարկվեցին ջարդերի, կոտորածի և անասելի խոշտանգների: Տապալվեց բռնակալութիւնը, հրատարակվեց սահմանադրական ռէժիմ, յոյս ծագեց, որ հայերի տանջանքներին այլ ևս վերջ կը դրվի, բայց սահմանադրական ռէժիմը իր մուտքը հռչակեց Ադանայի 30,000 հայերի կարմիր արիւնով: Այնուհետև, դարձեալ շարունակվեցին հարստահարութիւնները, կեղեքումները, մասնակի ջարդերը: Եւ մենք տեսանք դեռ երէկ «Н. Вр.» լրագրի հաղորդած տեղեկութիւններից, որ «Իթթիհադի» կամ երիտասարդ-Թիւրքերի կուսակցութիւնը յատկապէս վճարում էր վարձկան մարդկանց, որպեսզի կոտորածներ սարքեն Թիւրքահայաստանում: Ընկան երիտասարդ-Թիւրքերը, եկան Իթիլաֆականները, և մենք տեսնում ենք, որ եթէ նրանք իրանք ջարդեր չեն կազմակերպում իթթիհադականների պէս, բայց և անզօր են զսպել, պատժել ջարդարարներին և կանգնեցնել կեղեքումները:

Պարզ է, որ հիւանդ է ամբողջ Թիւրքական վարչական կազմը. պարզ է, որ սպասել Թիւրքաց կառավարութիւնից որևէ իրական ռէֆորմ, որևէ իրական դեղ և դարման հայերի համար անմտութիւն է և ժամանակի կորուստ:

Այժմ այդ շատ լաւ հասկացել է Եւրոպան. այժմ այդ շատ լաւ ըմբռնել են եւրոպական մեծ պետութիւնները: Միակ ելքը, միակ փրկութիւնը Թիւրքահայաստանի համար այն միջոցն է, որ մեծ պետութիւնները կամենում են գործադրել Մակեդոնիայում, ալբանական հարցերի լուծման համար, այն է՝ տալ Մակեդոնիային, Ալբանիային աւտոնոմիա: Նոյնը պէտք է գործադրվի և Հայաստանի վերաբերմամբ: Հայաբնակ նահանգներին պէտք է տրվի աւտոնոմիա, և հայ ժողովրդին իրաւունք՝ կրելու զէնք ինքնապաշտպանութեան համար, և այս ամենը եւրոպական պետութիւնների կոնտրոլի ներքոյ:

Ահա ինչ պէտք է պահանջեն հայոց պատրիարքը, հայոց ազգային ժողովը, ամբողջ հայ ժողովուրդը. ահա ինչ պէտք է խնդրեն օտար երկիրների հայերը՝ Ռուսաստանի, Ամերիկայի, Անգլիայի, Եգիպտոսի, Ֆրանսիայի, Հնդկաստանի, Աւստրիայի հայերը իրանց կառավարութիւններից՝ ստիպել Թիւրքիային տալ հայաբնակ նահանգներին նոյնպիսի ինքնավարութիւն, ինչպէս Սամոս կղզուն, Լիբանանին և, յամենայն դէպս, իրաւունք՝ կրելու զէնք ինքնապաշտպանութեան համար: Եւրոպական մեծ պետութիւնները կամ հաւաքաբար, կամ յանձնելով իրանցից մէկին, պէտք է իրանց խնամակալութեան և հսկողութեան ներքոյ տանեն նոր ռէֆորմները և իրագործել տան:

Բացի դրանից հայ ժողովուրդը Թիւրքիայում պէտք է անպայման բոյկոտի ենթարկէ օսմանեան պարլամենտի ընտրութիւնները. նա պէտք է յայտարարէ բարձրաձայն, որ այդ պարլամենտից, թէկուզ նրա մէջ 20 հայ մեբուսներ լինեն, ոչինչ լաւ բան իր համար չէ սպասում. նա պէտք է ձեռնպահ մնայ այդ ընտրութիւններին և չը տայ իր ներկայացուցիչները: Եւ այդ տեսակէտով, մենք ուղղակի դատապարտական և ոճրագործական ենք համարում դաշնակցականների վարմունքը, երբ նրանք այժմ քարոզում են, որ հայերը իրանց քուէները պարլամենտի ընտրութիւնների ժամանակ տան երիտասարդ Թիւրքերին և ոչ իթիլաֆականներին: Ոչ. հայ ժողովուրդը Թիւրքիայում այժմ, ի նշան բողոքի, իր ձայնը չը պէտք է տայ ոչ «Իթթիհադին», ոչ «Իթիլաֆին». նա, կրկնում ենք, ձեռնպահ պէտք է մնայ: Թող դաշնակցականները ի սէր ազգային գերագոյն շահերի հրաժարվեն օսմանեան դեղին ոսկիները իբրև ամսականներ ընդունելու գաղափարից:

Բողոքների միտինգներ, ժողովներ պէտք է կազմակերպել բոլոր քրիստոնեայ երկիրներում. բայց անհրաժեշտ է, որ այդ բողոքների նախաձեռնողները հայ յեղափոխականները, դաշնակցականները չը լինեն. պէտք է բողոքներով հանդէս գայ հայ ժողովուրդը և ոչ դաշնակցականը, որի հանդէս գալը միայն վարկաբեկել կարող է բողոքի ոյժը և խրտնեցնել կարող է պետութիւնները: Թող դաշնակցականները մասնակցեն իբրև հայ անհատներ, բայց իրանք նախաձեռնողներ չը հանդիսանան և այդպիսով վիժեցնել չը տան ազգային մեծ գործը:

Ուրեմն տեղական աւտոնոմիա՝ եւրոպացիների հսկողութեան ներքոյ, և զէնք կրելու իրաւունք՝ ինքնապաշտպանութեան համար—ահա ինչ պէտք է պահանջենք բոլոր հայերս Թիւրքիայի մեր հայ եղբայրների համար:

Հ. Առաքելեան

## ԱՒՍՏՐՕ-ՈՒՆԳԱՐԱԿԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Վիեննա.—Ունգարական պատգամաւորութեան կազմակերպչական նիստում օպպօզիցիայի ներկայացուցիչները բարձր բացականչութիւնների մէջ բողոքեցին ներկայ պատգամաւորութեան կազմի դէմ՝ իբրև ապօրինի և հեռացան:

Հօֆբուրգում պատգամաւորութեանը հանդէսով ընդունելու ժամանակ կայսրը, պատասխանելով երկու նախագահների ողջոյնի ճառերին, ասաց. «Մեր յարաբերութիւնները դէպի բոլոր մեծ պետութիւնները առաջվայ նման աչքի են ընկնում միանգամայն բարեկամական բնաւորութեամբ: Ցենվելով մեր սերտ, երկար տարիների ընթացքում փորձված դաշնակցութեան վրա գերմանական պետութեան և Իտալիայի հետ, մեր արտաքին քաղաքականութիւնը ինչպէս և առաջ, ղեկավարվում է միապետութեան շահերը պաշտպանելու և խաղաղութիւնը պահպանելուն նպաստելու ձգտումով: Անկեղծ համակրանքի զգացմունքով հետևում ենք Իտալացի և Թիւրք պետական գործիչների ջանքերին՝ գտնել հիմնաքար հաւասարապէս պատուաւոր հաշտութիւն կնքելու համար: Որովհետև մինչև օրս դեռ պարզ չէ Մերձաւոր Արևելքի իրերի դրութիւնը, իմ կառավարութիւնը յարուցեց մեծ պետութիւնների միջև հայեացքների փոխանակութիւն, որի ժամանակ յայտնի դարձաւ, որ բոլորն էլ միաբերան հանգստութեան են հետամուտ և ցանկանում են status quo-ն Բալկանում պահպանված տեսնել»:

Ունգարական պատգամաւորութեան նախագահ Լուկաչը ողջոյնի ճառի մէջ մատնանշեց, թէ անհրաժեշտ է հաստատ մնալ եռապետեան դաշնակցութեանը, որ ինքնին եւրոպական խաղաղութեան յուսալի գրաւականն է. ցաւ յայտնեց, որ պատերազմում են Աւստրո-Ունգարիայի դաշնակից Իտալիան և Աւստրո-Ունգարիայի տրադիցիօն բարեկամ՝ Թիւրքիան: Մեծագոյն համակրութեան զգացմունքով հռետորը ողջունեց մինիստրութեան, որ մտադիր է Բալկանի դրութիւնը քննութեան առարկայ դարձնել մեծ պետութիւնների միջև:

Աւստրիական պատգամաւորութեան նախագահ Դօբէրնիգը ընդգծեց, թէ շնորհիւ նրա, որ կայսրը հաւատարիմ է եռապետեան դաշնակցութեանը և շնորհիւ արտաքին քաղաքականութեան փորձված ուղղութեան, միջազգային խաղաղութիւնը պէտք է ապահովված համարվի երկար ժամանակով:

Ունգարական պատգամաւորութեան մասնաժողովի մէջ Բէրխտոլդը կարդաց իր ճառի էութիւնը: Ցիշելով, որ դաշնակից և բարեկամ պետութիւնների վերաբերութեամբ գոյութիւն ունեցող յարաբերութիւնների մէջ ոչ մի փոփոխութիւն չէ եղել, մինիստրը անցնում է հակիրճ կերպով հաղորդելու միջազգային կարևոր պատահարների մասին: Թիւրք-Իտալական պատերազմի առիթով Բէրխտոլդը ցնծագին ողջունում է երկու երկիրների պատուիրակների մասնաւոր բանակցութիւնները, որոնք ըստ էութեան կը նպաստեն խաղաղութեան գործին: Չը խօսելով այն գոհունակութեան մասին, որ նա զգում է երկու բարեկամ ու դաշնակից պետութիւնների միջև պատերազմը աւարտվելու առիթով, մինիստրը առանձնապէս կանգ է առնում այն հանգամանքի վրա, որ երբ արդէն կը սպառվեն արտաքին բարդութիւնները, այն դէպքում կարագանայ Թիւրքիայի ներքին ճգնաժամի լուծումը:

Ալբանական դէպքերի առիթով մինիստրի համառօտակի հաղորդագրութիւնն ասում է. «Մենք չը կարողացանք թագցնել այն երկիւղները, որոնք կարող էին առաջ գալ Թիւրքիայի ներքին ու արտաքին խաղաղութեան համար Թիւրք ալբանական միջադէպից: Երբ Թիւրքական նոր կառավարութիւնը նախազգուշացրեց ալբաններին, միաժամանակ մի քանի կէտերում, մանաւանդ Թիւրք չերնոգորական միջադէպի, Կոչանի դէպքերի և յոյն-ալբանական ընդհարումների (Էփիրում) պատճառով, ստեղծվեց մի կացութիւն, որ սպառնում էր ոչ միայն դժուարացնել խաղաղութեան գործը, այլև մինչև անգամ անկարելի դարձնել: Մենք դիմեցինք մեծ պետութիւններին առաջարկելով մտքերի փոխանակութիւն սկսել Բալկանի դրութեան մասին: Ընդ սմին նկատի կար գլխաւորապէս մի նպատակ՝ մեծ պետութիւնների միասիրտ գործելակերպով Բալկանում խաղաղութիւնը ու status quo պահպանելու հիմունքով ժամանակ տալ Բ. Դրանը և, եթէ յարմար գտնվի, բարեկամական խորհուրդներ ևս՝ հէնց իր խոստացած կարգ ու կանոնը եւրոպական վիլայէթներում մտցնելու համար: Ի մեծ գոհունակութիւն մեր՝ բոլոր կաբինէտները լիակատար գիտակցութեամբ միացան մեր առաջարկին, որով ճգնաժամի բռնի լուծման դէմ որոշ երաշխաւորութիւն ստեղծվեց: Առանձնապէս ռուսաց կաբինէտը մեզ հետ հաւասար լրջութեամբ ոգևորված է խաղաղութիւնը պահպանելու ցանկութեամբ: Բայց ինքնախաբէութիւն կը լինի անշուշտ, եթէ պահ մի կարծվի, թէ դրանով վերացված են արդէն Բալկանեան թերակղզու ներկայ դրութեան վտանգները: Եւրոպական Թիւրքիայում տիրող անգոհացուցիչ կարգերը չը մնացին առանց լուրջ ներազդեցութեան: Հարևան երկիրները այդ կարգերի ղեկավարներին դրել են ծանր խնդրի առաջ: Մենք կը կամենայինք յուսալ, թէ պետական խելամտութիւնը և ծանր պատասխանատուութեան գիտակցութիւնը թոյլ չեն տայ այդ ղեկավարներին ընթանալ այն ճանապարհով, դէպի ուր հրում են անպատասխանատու տարրերը: Մենք միևնոյն ժամանակ նոյնպէս յոյս ունենք, թէ Թիւրքիան ևս չի թագցնի իրանից դրութեան լրջութիւնը և կը գտնէ մի ուղի՝ վտանգաւոր բարդութիւններից խուսափելու համար: Մեր ունեցած տեղեկութիւններն արդարացնում են այն ենթադրութիւնը, թէ ներկայ կառավարութիւնը ամէն ջանք գործ է դնում ստեղծելու անհրաժեշտ երաշխաւորութիւններ ու ազգութիւնների կեանքի արդարացի պայմաններ: Այն առասպելը, թէ իբր էրենտալը նմանեցրեց Թիւրքական սահմանադրական կեանքի առաջդիմումը «Մ. և Ա.» կոմիտէտի քաղաքականութեան հետ, բնաւ իրականութեանը չէ համապատասխանում: Դէպի օսմանեան պետութիւնը գոյութիւն ունեցող բարեկամական վերաբերմունքը պատկանում է աւստրօ-ունգարական քաղաքականութեան տրադիցիաների թւին: Մեր շահերը կապված են ոչ թէ այս կամ այն կուսակցութեան հետ, այլ Թիւրքիայի տէրրիտորիալ անձեռնմխելիութեան ու նրա ներքին կարգաւորման հետ»:

Մինիստրն այնուհետև մատնանիշ է լինում Գերմանիայի ղեկավար գործիչների կոնֆերենցիայի վրա, ուր դեռ վերջերս աջողվեց հաստատութիւն գտնել այն բանի, թէ երկու կաբինէտների վերջնական նպատակները միևնոյնն են: Նոյն կերպ Բէտման-Հօլվէգի հետ ունեցած մտքերի փոխանակութիւնը երևան հանեց հայեացքների անշեղ միանմանութիւն, առանձնապէս պահպանողական սկզբունքների վերաբերմամբ, որոնք և առաջնորդող թել են ներկայանում երկու դաշնակիցների համար Մերձաւոր Արևելքում:

Բէրխտօլդը մատնանշում է Իտալական Թագաւորի և Սան-Ջուլիանօյի առաջիկայ տեսակցութիւնը: Այդ այցելութիւնը համապատասխանում է այն սովորութեան, որ սահմանվել է մինիստրի նախորդների միջև:

Վերջում մինիստրն ասաց. «Ինչպէս երևում է բացատրութիւնների փաստերից, ներկայ կացութիւնը, չը նայած մեծ պետութիւնների կաբինէտների խաղաղութիւնը պահպանելու միասիրտ ցանկութեան, բոլորովին չունի հանգստացուցիչ բնաւորութիւն: Քաղաքական մթնոլորտում կուտակվել է շատ էլեկտրականութիւն, որը սակայն չէ կարող ցրել չը լուծված պրօբլէմների խաւարը: Դիպլոմատիան արթուն է սպառնացող միջադէպերը իրանց բնում խափանելու և բալկանեան հրդեհի վտանգը հանգցնելու համար: Մենք աշխարհագրական դրութեամբ մօտ ենք այն տեղին, ուր գետինը հրդեհով է բռնկված: Միապետութեան մեծ շահերն առաջադրված են. սոսկ այն ժամանակ, երբ մենք զինված կը լինենք ծովի ու ցամաքի վրա, մենք կարող ենք հանգիստ նայել ապագային»:

Վիեննա.—«Ֆրեմդենբլատը», «Նէյէ-Վին.-Տագեբլ.» և «Վին.-Ալգ.-Ցայտունգը» գահական ճառը գտնում են հանգստացնող, իսկ «Նէյէ Ֆրէյէ-Պրեսսէն»—սպառնական: «Ցէյտը» հաղորդում է, որ երբ Դօբէրնիգը յոյս յայտնեց, որ խաղաղութիւնը կը պահպանվի, միապետի դէմքի վրա սահեց թեթև կասկածի ստուեր: Գահական ճառը, չը նայած որ զսպված է, թողեց միջազգային դրութիւնը խիստ քննադատաբար գնահատելու տպաւորութիւն: Այդ տպաւորութիւնը ուժեղացրեց կայսրը, որ Դօբէրնիգին ասաց բոլորին լսելի խօսքերով. «Դրութիւնը այժմ դժուար է»։ Պատգամաւորները հասկացան այդ խօսքերը այն մտքով, թէ կայսրը ընդգծեց բալկանեան վտանգի և Ունգարիայի մէջ սկսված յուզմունքի ֆատալ զուգադիպութիւնը։

—

*Հռոմ*.—Աւստրիական կայսրի գահական ճառի առիթով «Կոր. դ'Իտալիան» գրում է. «Իտալիային չէ կարող յուզել դաշնակից պետութեան զօրքի ուժեղացումը, բայց և այնպէս հարևան պետութեան ռազմական զարթնումը պէտք է Իտալիային դրդէ գիտակցել, թէ չը պէտք է մնալ ընդհանուր սպառազինման ամենաետևում, այլ պատրաստվել ամեն տեսակ հնարաւոր թշնամու դէմ»։

## ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

(*Պետերբուրգի Հեռ. Գործ.*)

11 սեպտեմբերի

*Նանսի*.—Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեվիչը ներկայ եղաւ իր պատուին տրված ճաշին զօրաբանակի հրամանատարի մօտ։

Գեներալ Կաուլբարսը յայտնեց «Ֆիգարօյի» թղթակցին, որ նա ապշել է ֆրանսիական զօրքի ահագին աջողութիւններից. առանձնապէս գնահատում է զօրքերի կարգապահութիւնը, համբերատարութիւնը, ճշգապահութիւնը, հանգստութիւնը ու սառնասրտութիւնը, զինուորական օդագնացների քաջութիւնը։

Մեծ Իշխանը և Միլլերանը մեկնեցին այցելելու Տուլի նաւահանգիստները, որտեղից կը մեկնեն Պարիզ։

—

*Լոնդոն*.—Երկրորդ նաւատորմը այսօր մեկնում է Ստոկհոլմ և սեպտ. 22-ին կը մեկնէ չորս օրով Ռեվել։

—

*Բելգրադ*.—«Սամօուպրավան» տպել է կառավարական հաղորդագրութիւն՝ թէ կառավարութիւնը տեսնում է, որ մեծ պետութիւնները ձգտում են հանգստութիւն պահպանել Բալկանում։ Պատերազմի մասին տարածված լուրերն անհիմն են։

Մամուլը գոհ չէ կառավարական հաղորդագրութիւնից և խորհուրդ է տալիս չը լսել եւրոպական խորհուրդները և ամբողջովին իր յոյսը դնել սերբ ժողովրդի վրա։

—

*Աթէնք*.—Կրետացի պատգամաւորները հրաւիրում են հելլէն ժողովուրդը պաշտպանել իրանց գործը, որովհետև ներկայ բոպէն չափազանց յարմար է Կրետէի միացման հարցի վերջնական նպաստաւոր լուծման համար։

—

*Լոնդոն*.—Չինական նոր 100 միլիոնի փոխառութեան նախագիծը գործադրվելու է այս շաբաթվայ վերջը։ Սկզբում յայտարարվելու է ստորագրութիւն 50 միլիոնի համար 5%-ով։

—

*Պէկին*.—Նախագահի հրամարտակով պրեմիեր Լուչինգիանը արձակվեց պաշտօնից հիւանդութեան պատճառով։

Ազգային ժողովը համաձայնեց պրեմիերի պաշտօնում տեսնել ներքին գործերի մինիստր Չժաօբինցզինին, որ Իւանշիկայի հին կողմնակիցներից է։

—

*Վիեննա*.—Պօրտուգալական նախկին թագաւոր Մանուէլը ընդունվեց կայսրից։

## ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

—

(*Պետերբուրգի Հեռ. Գործ.*)

10 սեպտեմբերի

*Թիֆլիս*.—Գեներալ Ֆիրսարօվը հեռագրում է. «Շահսէվանները այն աստիճան լուրջ պարտութիւն կրեցին, որ այլևս չեն մտածում դիմադրութեան մասին։ Շահսէվանները առ այժմ յանձնել են 1000 հրացան»։

—

*Թաւրիզ*.—Ուրմիայից մի քանի վերստ հեռաւորութեան վրա քիւրդերը կողոպտել են պարսկական պօստը։

—

*Ուրմիա*.—Քիւրդերը քանդեցին Խոյի և Դիլմանի միջև հեռագիրը, կողոպտեցին երկու կարաւան, սպառնում են քրիստոնեաների գիւղերին։

## ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

—

(*Պետերբուրգի Հեռ. Գործ.*)

11 սեպտեմբերի

*Կ. Պօլիս*.—Չերնոգորական և սերբիական սահմանագլուխներում ընդհարումները շարունակվում են։

Մալիսօրները յարձակվեցին մի քանի նոր զինապահեստների վրա։

Քիւրդերը Բիթլիսի վիլայէթում գիւղերը հրդեհելու սպառնալիքով հայերից ստորագրութիւններ են առնում՝ հայկական հողերի կէսը քիւրդական բէկերին զիջելու մասին։

—

*Սալոնիկ*.—Ցարգրադի երկաթուղու մօտ Տօյրանին կից կամուրջի տակ պայթեց դժոխային մեքենայ։

—

*Կ. Պօլիս*.—Իտալական նաւատորմը լողում է Քիօսի և ասիական ծովափի հանդէպ։

—

*Հռոմ*.—Հաստատվում է, որ Զմիւռնիայում տեղի է ունեցել ցոյց, որը քաղաքական շրջանները բացատրում են իբրև իտալական քաղաքականութեան փոփոխութիւն Թիւրքիայի նկատմամբ, որ երևան է հանում անհաշտութեան ոգի։ Ասում են, որ Բ. Դրան յամառութիւնը շարունակվելու դէպքում նաւատորմը ցոյցերից կանցնէ գործողութիւնների, որպիսի հանգամանքը կը փոխէ հաշտութեան պայմանները ի վնաս Թիւրքիայի։ Թիւրք-իտալական բանակցութիւնները դեռ շարունակվում են։

Ստեֆանին հաղորդում են, որ սեպտ. 7-ին տեղի ունեցած կռւում մասնակցում էին թշնամու բոլոր ոյժերը՝ թւով 15,000 մարդ։ Թշնամին կորցրեց 2000 մարդ։

### ԿԻԼԻԿԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

—

Մերսին, 20 օգոստոս

Պատերազմին և քօլերային պատճառաւ առևտրական շարժումը մեռած է մեր կողմերը։ Արմտիքը աղէկ չեղաւ Ադանայի շրջակայքը, մինչ գաւառները ընդհանրապէս աղէկ են։ Քիչ շատ ոգևորութիւն միմիայն երկաթուղիի գիծերու աշխատութեանց վրայ կայ։ Հայդար-փաշայէն մեկնող Բաղդադի երկաթուղին Ադանայի հետ կցուելու համար կը սպասուի աւարտուելուն Տորոսի մէջէն բացուելի փապուղիին (թունէլ), որ երկու-երեք տարիէն առաջ պիտի չվերջանայ։ Կարևոր փապուղիներու աշխատութիւնք կը կատարուին նաև Ադանայի կուսակալութեան արևելք Բաղչէի մօտակայք։ Երբ աւարտին ասոնք, երկաթուղիի գիծը այլևս մինչև Բաղդադ հարթ դաշտավայրերու մէջէն պիտի անցնի։

Այժմ փութով շինուելու վրայ է նաև Իսքէնդէրունի ճիւղը, որ Դէօրթ-Եօլէն անցնելով Թօփրակ-Կալէի քով պիտի միանայ Ադանայի երկաթուղիին մայր գիծին հետ։

Իսքէնդէրուն, շինուած՝ համանուն ծոցին վրայ, որ բնականէն հանգիստ և ապահով նաւահանգիստի մը յարմարութիւնք կընծայէ, շուտով մեծ կարևորութիւն պիտի ստանայ։ Նաւահանգիստին շինութեան ևս ձեռնարկուած է։ Իսքէնդէրունի Բաղդադին գիծին կապուիլը մեծապէս պիտի նուազեցնէ Մերսինի առևտրական դիրքը։

Ազգային կացութիւնը նախանձելի բան մը չունի առայժմ։ Կուսակցականներուն Ադանայի առաջնորդ տէր-Շահէ ծ. վարդապետին դէմ մղած անիմաստ ու անմիտ կռիւը Ադանան խառնաշփոթութեան մատնած է, որմէն ամենէն աւելի տուժելու սահմանուած է Ադանայի կրթական գործը։

Այրացաւեր Մուշեղեան գեղեցիկ վարժարանի փլատակներուն վրայ ի նորոյ շինուած մեծ և փառաւոր կրթական յարկը, հակառակ իր արտաքինին, հեռու է ներքին խաղաղութիւն ներշնչելէ։ Տէր-Շահէ ծ. վարդապետ, որ վերջերս թեմական այցելութեան ելած էր, ստիպուեցաւ ընդհատել զայն և Ադանայ վերադառնալ ուսումնարանական տագնապին վերջ մը տալու համար։

Տագնապը նոր չէ։ Քանի մը ամիսներէ ի վեր ան կար արդէն և խնդիրը նոյն իսկ դատարանաց առջև հանուած էր արտաքսեալ մէկ քանի կուսակցական ուսուցիչներու ձեռամբ։

Անոր ամենայնիւ բացայայտ է, թէ դաշնակցականներուն այս ու այն պատրուակի տակ յարուցած խնդիրներն ու խոչընդոտները նպատակ ունին աւելի հարուածել տէր-Շահէ ծ. վարդապետը, որուն կորուկ և կորովի վարմունքը ազգային ցեցերուն դէմ կերևի շատ դիւր եկած չէ ոմանց։

Բարեբաղդաբար, Ադանայի առաջնորդը ատոնց կարծածին չափ տեղատու և թոյլ նկարագիրի տէր մէկը չէ։

Մի-Նա

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅԵՏԱՁԳԵԼ ԹԵ՞ ՈՉ

I

Թիֆլիսի ինքնակոչ Յօբելեանական Յանձնաժողովը և «Հօրիզօն» թերթը, տեսնելով որ իրանց բոլոր ինտրիգները՝ ինսինուացիաները և աղմուկները՝ խանգարել հայ գրերի գիւտի 1500-ամեակի և հայ տպագրութեան 400-ամեակի յօբելեանի տօնախմբութիւնը Էջմիածնում հոկտ. 13-ին և իրանց բոլոր ջանքերը՝ կատարել այդ տօնը Թիֆլիսում նոյեմբերի 26-ին ապարդիւն են անցնում, և հայ հասարակութիւնը, հայ ինտելիգենցիան—բացի Երևանի թեմի 25 ուսուցիչներից, որոնք նոյնիսկ իրանց անունը յայտնելու քաջութիւնը չէին ունեցել—ամենևին արձագանք չէ տալիս իրանց կոչին, այլ հակված է միանալ Էջմիածնի որոշման, խոհեմութիւն համարեցին նահանջել, թմբուկը յետ խփել և մի նոր առաջարկ անել, այն է՝ որ տօնախմբութիւնը յետաձգվի այս տարի, չը կատարվի ոչ հոկտ. 13-ին և ոչ ևս նոյեմբերի 26-ին, այլ աւելի ուշ։

Ուրեմն, այժմ հարց է բարձրացել՝ յետաձգել յօբելեանի տօնախմբութիւնը թէ ոչ։

Այս հարցի առիթով մենք կը կամենայինք մեր կարծիքն ևս յայտնել՝ գոհացում տալու համար «Մշակի» ընթերցողներից շատերի հարցմունքին։

Ընթերցող հասարակութիւնը գիտէ, որ «Մշակը» հէնց առաջին օրից—և այն՝ առաջին ժողովում, որ գումարվել էր իր ներկայացուցիչների միջոցով (Ստ. Մալխասեանց, Ա. Եզեկեան, Լ. Դանիէլեան)—առաջինն եղաւ առաջարկող, որ յօբելեանը յետաձգվի մի կամ երկու տարով։ Սակայն այդ առաջարկը չընդունվեց, որովհետև այդ ժամանակ հօրիզօնականների միակ նպատակն էր այդ յօբելեանի դիմակի ներքոյ խանգարել «Մշակի» յօբելեանը։

Այդ պատճառով «Մշակն» ևս իր համախոհներով հեռացաւ ժողովից և չը մասնակցեց Յանձնաժողովի ընտրութեան, որ դարձաւ այնպիսի միակողմանի ընտրված մի մարմին, որը ոչ հեղինակութիւն և ոչ ևս բարոյական իրաւունք ունէր գլուխ կանգնելու մի գործի, որ պէտք է համազգային բնաւորութիւն կրէր։ Նոյնպէս «Մըշակը» և «Արօրը» առաջինն եղան, որոնք առաջարկեցին ազգային մեծ տօնը համազգային դարձնելու նպատակով կազմել մի յանձնաժողով, որի անդամակցութեան հրաւիրել բոլոր նշանաւոր հայագէտներին, հայ բանասէրներին, Մխիթարեան Միաբանութեան երկու հատուածների ներկայացուցիչներին, ինչպէս և աւետարանական հայերի ներկայացուցիչներին։ Դրա համար հարկաւոր էր, առաջարկում էինք, որ կազմվի մի կենտրօնական յօբելեանական յանձնաժողով, պատուաւոր նախագահութեամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և անդամակցութեամբ վերոյիշեալ ականաւոր հայագէտների և բանասէրների։ Բնական է, որ այդ տեսակ հեղինակաւոր յօբելեանական յանձնաժողով չէր կարող լինել Թիֆլիսի Յանձնաժողովը, բաղկացած լինելով, շատ քիչ բացառութեամբ, այնպիսի անձերից, որոնք կամ բարոյապէս վարկաբեկված են հասարակական կարծիքի առաջ, կամ բոլորովին անծանօթ են հայ ազգին, բացի նրանից՝ որ այդ Յանձնաժողովը կրում է ուղղակի թայֆայական բնաւորութիւն։ Այդ է պատճառ, որ երբ հրատարակվեց, թէ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կարգադրութեամբ կազմվել է Էջմիածնում յայտնի հայ բանասէր Միաբանի նախագահութեամբ Կենտրօնական Յօբելեանական Յանձնաժողով, մենք, չը տեսնելով հրապարակի վրա ուրիշ աւելի հեղինակաւոր մարմին, ողջունեցինք այդ Յանձնաժողովի կազմութիւնը և որոշեցինք ոյժ տալ Էջմիածնի որոշման, որ ունէր իր մէջ և մի քանի այլ գրաւիչ կողմեր։ Առաջին, որ Էջմիածինը որոշել էր տօնել և հայ գրերի գիւտի 1500-ամեակը, որ, պատմական և ազգային տեսակէտից, աւելի կարևոր նշանակութիւն ունի. երկրորդ, որ Էջմիածնին մօտ է գտնվում Օշականի վանքը, ուր գտնվում է գրերի անմահ գտիչի դամբարանը. երրորդ, որ Էջմիածինը իր անցեալ պատմութեամբ, իր մատենադարանով, իր ճեմարանով ու տպարանով սերտ կերպով կապված է հայկական գրականութեան և տպագրութեան հետ։

Մենք կարծում էինք, որ երբ հանդէս եկաւ Էջմիածնի որոշումը, Թիֆլիսի ինքնակոչ Յանձնաժողովը կը միանար նրան և ինքն ևս կաշխատէր օգնել. բայց այդ Յանձնաժողովը անձնական ամբիցիայի և վիրաւորանքի խնդիր դրեց և այնուհետև ամեն կերպ աշխատեց երկպառակութիւն ձգել, մտքերը պղտորել և խանգարել տօնախմբութիւնը։ Նա նոյն իսկ կանգ չառաւ խարդախութեան առաջ. նա հրատարակեց մի որոշումն ընդդէմ Էջմիածնի որոշման և, հասարակական միտքը մոլորեցնելու նպատակով, այնպէս ցոյց տուեց, որ իբր այդ որոշումն եղել է միաձայն, այն է բոլոր անդամների մասնակցութեամբ, որոնց մէջ գտնվում են և Եփրեմ եպիսկոպոսը, Իսահակ Յարութիւնեանը և այլք։ Եւ սակայն թէ Եփրեմ եպիսկոպոս, թէ Իսահակ Յարութիւնեան և թէ այլք բացակայ են եղել և չեն մասնակցել այդ որոշման, այլապէս շատ տարօրինակ պէտք է լինէր, որ մի թեմակալ առաջնորդ, մի եպիսկոպոս մասնակցում է մի որոշման, որ ուղղված է իր կաթողիկոսի կարգադրութեան դէմ։ Իր ժամանակին մենք մերկացրինք Լէօի, Գր. Վարդանեանի և ընկերների այդ խարդախութիւնը։ Այնուհետև այդ յանձնաժողովը կամեցաւ յօգուտ իր շահագործել և մի այլ հանգամանք։ Երբ դեռ յայտնի չէր Էջմիածնի որոշումը հոկտ. 13-ի մասին, բնական է, որ մի քանի տեղեր յօժարութիւն էին յայտնել ընդունել Թիֆլիսի Յանձնաժողովի առաջարկած օրը, այն է նոյեմբերի 26-ին, սակայն, երբ յայտնի դարձաւ Էջմիածնի որոշումը, այդ տեղերը՝ Բագու, Կ. Պօլիս, յետ առան իրանց որոշումները և որոշեցին յարել Էջմիածնին։ Բայց այս հանգամանքը Թիֆլիսի Յանձնաժողովը և «Հօրիզօնը» դիտմամբ, դարձեալ հասարակական կարծիքը մոլորեցնելու նպատակով, չեն յիշում, այլ շարունակ գրում են, թէ Թիֆլիսը, Բագուն, Կ. Պօլիսը որոշել են տօնել նոյեմբերի 26-ին և գրական ֆօնդ հիմնել։ Մինչև այսօր ոչ Թիֆլիսը, ոչ Բագուն, ոչ Կ. Պօլիսը որևէ այդպիսի որոշումն չեն արել. ընդհակառակը, մենք գիտենք, որ նորերս Բագւում կայացած ժողովը անյարմար է գտել չը մասնակցել հոկտ. 13-ի տօնին. մենք գիտենք, որ, օրինակ, Վլադիկավկազում կայացած ժողովը որոշել է խորհուրդ տալ Թիֆլիսի Յանձնաժողովին՝ յարել Էջմիածնի որոշման. մենք գիտենք, որ Կ. Պօլիսը ազգ. կենտրօնական վարչութեան որոշմամբ ընտրել է ներկայացուցիչներ՝ Էջմիածին ուղարկելու հոկտ. 13-ին և ընտրել է մի առանձին յօբելեանական մասնաժողով՝ հոկտ. 13-ին Պօլսում ևս կատարելու յօբելեանը. գիտենք, որ Եգիպտոսի Հայկական Բարեգ. Ընդ. Միութիւնը, որ յօժարել էր նոյեմբերի 26-ին տօնելու, չհամա-

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ՄԻ ԱՄԻՍ ԹԱՒՐԻԶՈՒՄ

(Ուղևորական ակնարկներ)

I

Տասն և հինգ տարուց ի վեր ես չէի այցելել Թաւրիզը, ուր անցրել եմ իմ մանկական և պատանեկական տարիները։ Վերջին անգամ ես այցելել էի այդ քաղաքը 1897 թւին։

Անձնական մի քանի գործերով և մանաւանդ Ջօհրաբեան կտակի իրագործման պայմանները ճշգելու նպատակով ես այս անցեալ յուլիս ամսի 21-ին մեկնեցի Թիֆլիսից դէպի Թաւրիզ։

Առաջ՝ Թիֆլիսից Թաւրիզ գնալու համար գնում էինք երկաթուղով մինչև Աղստաֆա կայարանը և ապա այդտեղից պօստային կառք կամ մասնաւոր ֆայտօն վարձելով Դիլիջանի, Երևանի, Հին-Նախիջևանի վրայով գնում էինք մինչև Ջուղա կամ Ջուլֆա, Արաքս գետի վրա, սահմանագլուխը և անցնելով նոյեան ժամանակներից մնացած մի խարխուլ նաւակով Արաքս գետը, ոտք էինք կոխում պարսից հողի վրա։ Այդտեղից կամ չափարի ձիերով, կամ քարվանով, կամ ֆայտօնով, կամ քաջավա և թախտրավան կոչված պարսկական սայլերով, բարձված, ձիերի կամ ջորիների վրա, գնում էինք Թաւրիզ։ Չափարով, այսինքն պօստային ձին շարունակ քառասմբակ վազեցնելով կարելի էր հասնել Ջուլֆայից Թաւրիզ 24 ժամում. ֆայտօնով՝ երկու օրում, իսկ քաջավայով կամ թախտրավանով՝ 3 օրում, գիշերելով քարվանսարաններում։

Այժմ, 15 տարուց յետոյ, դրութիւնը բոլորովին փոխվել է։

Երբ երկաթուղին կանգ առաւ վերջին կայարանում՝ Ջուլֆա, ռուսական սահմանագլխին, ապշած մնացի։ Աստուած իմ, մի՞թէ սա առաջվայ Ջուլֆան է, ուր բացի մաքսատնից և մի երկու երեք շինութիւններից՝ ոչինչ չը կար, ուր գիշերելու միակ վայրը՝ պօստային կայարանն էր։ Այժմ, վօկզալի դռան առաջ ինձ մեկնում էին զանազան տոմսեր՝ «Համեցէք «Ֆրանցիա» հիւրանոցը, համեցէք «Էկօնօմիա» հիւրանոցը» ասելով։ Այդ աւազոտ, անապատ հողի վրա ահագին շինութիւններ են կառուցված. բազմաթիւ մագազիններ, խանութներ. երկու մեծ բանկային հաստատութիւններ կան. մի խօսքով մի փոքրիկ գաւառական քաղաք։

Եւ Ջուլֆան ոչ թէ ամիսներով, այլ օրերով, ժամերով պէտք է աւելի զարգանայ, մանաւանդ երբ ձեռնարկվի երկաթուղու շինութեան Ջուլֆայից Թաւրիզ։

Գիշերելով հիւրանոցում, ուր ժժեղները բաւական խայթեցին մեզ, երկրորդ օրը, յուլիսի 23-ին, առաւօտեան ժամը 10-ին անցանք Արաքսի վրա կառուցված գեղեցիկ կամրջով Պարսկական Ջուլֆան, որ առաջ նոյնպէս մի քանի հողակոյտային շինութիւններ ունէր, իսկ այժմ պարունակում է բազմաթիւ նոր տներ, հաստատութիւններ։ Այդտեղ, մաքսատան առաջ ժամը 11-ին նստեցինք ռուսական խճուղային ընկերութեան աւտօմօբիլային կառքը և սլացանք դէպի Թաւրիզ։

Ճանապարհին, մինչև Թաւրիզ, կանգ առանք մի քանի կայարաններում, որոնց ամենի վրա ծածանվում էր ռուսական դրօշակ։ Ճանապարհի ամբողջ տարածութեան վրա 4—5 տեղ պահականոցներ են շինվում, ուր ապրում են ռուս կօզակներ։ Ես ինձ բնաւ չէի երևակայում Պարսկաստանում, այլ Ռուսաստանում, քանի որ ամեն տեղ ծածանում էր ռուսական դրօշակ և տեսնում էի ռուսական զօրքի կազարմաներ։ Մարանդ գիւղաքաղաքում, ուր առաջ հասնելիս՝ գտնում էինք լաւ սեր, մածուն և լաւ քաբաբ, այժմ գտանք կայարանում միայն ռուսական բօրշչ։ Երբ ես ցանկութիւն յայտնեցի, որ ուղարկեն գնել բազարից սեր և չելօվ-քաբաբ, ինձ ասացին. «Էհ, աղա, անցան այդ ժամանակները. այժմ ոչինչ չը կայ այլևս յեղափոխութիւնից յետոյ»։

Ուրեմն պարսկական յեղափոխութեան անմիջական հետևանքը, գոնէ Մարանդի համար եղել է սերի և չելօվ-քաբաբի անհետանալը...

Երեկոյեան ժամը 7-ին հասանք Թաւրիզի մօտ՝ Աջի-չայ կոչված գետի ափին շինված վերջին կայարանը։ Այստեղից արդէն կառքով պէտք էր գնալ քաղաք, որովհետև փողոցների նեղութիւնը անհնարին է կացուցանում աւտօմօբիլների շարժումը։

Արդէն մութը կոխել էր. կառքը անցնում էր նեղ, ծուռ, մութ փողոցներով. չը նայելով որ ժամը դեռ 9-ն էր երեկոյեան, փողոցներում տիրում էր գերեզմանային լռութիւն. ոչ մի ձայն, ոչ մի շշուկ և ոչ մի մարդկային էակ. միայն տեղ-տեղ քաղցած շներ ոռնում էին։

— Ինչո՞ւ այսպէս լռութիւն և դատարկութիւն է տիրում փողոցներում,—հարցրի ես թիւրք կառապանին.—ոչ մի խանութ չը կայ բաց. չէ որ առաջ այդպէս չէր։

— Այո, աղա, առաջ այդպէս չէր. բայց այժմ ձեր տեսած առաջվայ Թաւրիզը չէ. այժմ ամենքը ազանից յետոյ փակվում են իրանց տներում և դռները պինդ ամրացնում։

— Մի՞թէ անապահովութիւն է. մի՞թէ վախ կայ աւազակներից։

— Ոչ. այժմ մեր ֆարման-ֆարման Շուջա-ուդ-Դօվլէի օրով ոչ մի աւազակ չի համարձակվի երևալ. ամեն տեղ հանգստութիւն է, մանաւանդ որ այժմ ռուս զօրքեր կան Բաղը-Շիմալում. էլ ոչ Ռահիմ-խանն է կարողանում կողոպտել, ոչ Սաթթար-խանը կամ Բաղը-խանը։

— Ի՞նչպէս. ձեզ կողոպտում էին և Մահմեդ-Ալի շահի մարդիկ և մաշրութէի (սահմանադրութիւն) մարդիկ,—հարցրի ես։

— Ինչո՞ւ չէ. մի օր Ռահիմ-խանն էր գալիս իր ձիաւորներով կողոպտում, միւս օրը Սաթթար-խանը իր ֆէդայիներով։

— Իսկ այժմ։

— Այժմ, այն օրից, երբ եկան ռուս զօրքերը և քաղաքի կառավարիչ դարձաւ Շուջա-ուդ-Դօվլէն, էլ ոչ Ռահիմ-խան կայ, ոչ Սաթթար-խան, ոչ մուսթաբիդ (ռէակցիօնէր, միապետական), ոչ մաշրութիէ (սահմանադրական)։

Կառքը, տասնեակ անգամ զանազան փոսերից անցնելով, բաւական թափահարելով մեզ, վերջապէս կանգ առաւ մի դռան առաջ։

— Ահա և Թաջիր-բաշու տունը,—ասաց կառապանը։

Ես դուրս եկայ կառքից և հազիւ ճանաչեցի մեր սեփական տունը, այն փողոցը, որով տարիներ շարունակ անցուդարձ էի արել ես։

Սկսեցի դուռը ծեծել մուրճով։

Մեր տանը՝ քոյրերս, մայրս և փեսաս ու երեխաները թէև դեռ չէին պառկած, բայց և չէին սպասում իմ գալստեանս։ Նրանք ակնկալում են եղել, որ ես Ջուլֆայից հեռագիր կը խփեմ։ Ինձ ասացին, որ իրանք և շատերը ծանօթներից որոշել էին կառքերով ընդ առաջ գալ ինձ Աջի-չայ կայարանը, իսկ ես զրկեցի նրանց այդպիսի մի հաճոյքից և զբօսանքից։ Ես կարող էի Ջուլֆայից տելեֆօնով խօսել մեր տան հետ (Ջուլֆայից Թաւրիզ տելեֆօնային հաղորդակցութիւն կայ), բայց չը կամենալով մերոնց անհանգստութիւն պատճառել, ես դիտմամբ իմաց չը տուի գալուստս։

Յոգնած լինելով ես, ընթրիքից յետոյ պառկեցի շուտով, բայց առաւօտեան շուտով և վերկացայ ու բարձրացայ կտուրը։ Թաւրիզում, ինչպէս յայտնի է, կտուրը ճեմելիքի տեղ է։ Կտուրից ես դիտեցի մեր տան ամբողջ շրջակայքը և բաւական փոփոխութիւն գտայ։ Ես նկատեցի հայոց թաղում մի քանի նոր շինութիւններ, որոնց մէջ մինը՝ իր բարձրաբերձ աշտարակով և մեծութեամբ իսկոյն ուշադրութիւնս գրաւեց։ Յետոյ ես իմացայ փեսայիցս, որ դա կաթօլիկների նոր շինած եկեղեցին է և ուսումնարանը։ Յանկարծ, երբ աչքս դարձրի դէպի Արք կոչված բերդը, նկատեցի, որ նա թէև դեռ կանգուն է, բայց շրջապատը՝ աւերված, իսկ ստորոտում երևում էր մի բարձր տրապէզ, որի միջից մի քանի չուաններ էին կախված։ Ինձ թւաց, որ դա մարմնամարզութեան համար շինված մի տրապէզ է, բայց երբ կտուրից իջայ սենեակ թէյ խմելու, փեսաս բացատրեց, որ դա այն կախաղանն է, որից ռուսաց զինուորական-դաշտային դատարանի վճռով կախվեցին ռուսական զօրքի վրա յարձակման գլխաւոր հեղինակները և դաւադիրները, ինչպէս և դաշնակցական Պետրոս-խան Տէր-Անդրէասեանը։

— Բայց մի՞թէ դեռ գործում է կախաղանը, որ մինչև այսօր պահել են կանգուն։

— Ոչ, բայց սարսափ ազդելու համար դեռ պահում են կանգուն։ Թէև այդ դէպքից յետոյ Շուջա-ուդ-Դօվլէն դարձեալ կախել է տուել մի քանի ֆէդայիների և թալանչիների, բայց նրանց կախել են այլ տեղում և ոչ Արքում։

Մեր տան կտուրի շրջապատի ծայրերին ես նկատել էի ծակեր. երբ այդ մասին յայտնեցի, քոյրս ասաց.

— Մեր կտուրին ռուսաց զինուորները դիրք էին բռնել, ինչպէս և մեր միւս մեծ տան կտուրի վրա։

— Բայց ովքե՞ր էին յարձակվողները։

— Պարսիկ ֆէդայիները Էմիր Հիշմաթ յեղափոխականի գլխաւորութեամբ ամրացել էին Արքում և այդտեղից թնդանօթներն ու հրացանները ուղղել դէպի հայոց թաղը՝ ռուսաց հիւպատոսարանի վրա և դէպի այն կէտերը, ուր մնում էին ռուս զինուորները։ Գնդակները գալիս հասնում էին հայոց տներին։

Փեսաս ասաց, որ ինքն այդ ժամանակ

նալով Էջմիածնի որոշումը, նոյնպէս որոշել է յարել Էջմիածնին։ Ուրեմն միանգամայն անհիմն է «Հորիզոնի» այն դերը (№ 199), թէ «Էջմիածնի Յանձնաժողովը պէտք է ի նկատի ունենայ Թիֆլիսի, Բագուի, Պոլսի և այլ տեղերի յանձնաժողովների տրամադրութիւնը»։ Կրկնում ենք, որևէ տրամադրութիւն՝ յօգուտ Թիֆլիսի Յանձնաժողովի որոշման՝ մինչև այսօր որևէ տեղից չէ արտայայտվել, բացի Երևանի թեմի հայոց դպրոցների 25 ուսուցիչների յայտարարութիւնը, թէ իրանք չեն կամենում ենթարկվել Էջմիածնի որոշման։ Բայց այդ յայտարարութիւնն էլ, ինչպէս մենք ցոյց տուինք, կարգապահական տեսակէտից միանգամայն անընդունելի է, և հասարակական կարծիքը դեռ սպասում է տեսնել, թէ Էջմիածինը ինչ կարգադրութիւն պէտք է անէ՝ զգաստութեան և կարգապահութեան բերելու այդ 25 ապերասան ուսուցիչներին, որոնք, իմանալով իրանց սանձարձակ վարմունքը, չեն համարձակվել նոյնիսկ իրանց անունները յայտնել։

Այս բոլոր փաստերը ցոյց են տալիս, որ հասարակական կարծիքը մինչև այս րոպէին յօգուտ Էջմիածնի որոշման է եղել և ոչ մի հակառակ տրամադրութիւն՝ հոկտ. 13-ի տօնախմբութեան՝ չէ արտայայտվել։

Այժմ, չը նայելով այս ամենին՝ «Հորիզոնը» և Թիֆլիսի Յանձնաժողովը, անճարացած, կրկնում են այն առաջարկը, որ ամենից առաջ արել էր «Մշակը» և իրանք չէին ընդունել, այն է՝ առաջարկում են յետաձգել յօբելեանը, չը տօնել ոչ հոկտ. 13-ին, ոչ նոյեմբերի 26 ին, այլ մի այլ օր, յամենայն դէպս ոչ այս տարի։

Քննենք այս առաջարկը ըստ էութեան, թէ որքան նա ընդունելի է և նպատակայարմար։

Հ. Ա.

## ԳԻՒՂ ԱՄԱՐԱՆՈՑԻ ԿԵԱՆՔԻՑ

VI

Ամառային ուրախ սեզոնն աննկատելի սահեց, անցաւ։

Ամարանոցի եռուն, կենսախինդ կարճատև կեանքը, գաւառի լճացած, նեխված մթնոլորտին անսովոր ժխորն, աղմուկը և ցնծութեան բազմակերպ արտայայտութիւններն աստիճանաբար նուազելով՝ բոլորովին անյայտացան, հանգան։

Գիւղը դատարկ է, փողոցներն ամայի, բնակարաններն անմարդաբնակ, անկենդան, երեսի վրա ձգված։ Սևատուրը համարեա կանգ առած։

Ամարանոցատէր-գիւղացին, հազիւ ազատվելով իր թանգագին «դաչնիկին» ծառայելու, փաղաքշելու բազմատեսակ հոգսերից, նոր է միայն սթափվում, նոր է միայն գլխի ընկնում, որ ինքը կապված է օրգանական ամուր կապերով մայր-երկրի և մոռացութեան ու անտէրութեան դատապարտված սննդատու հողի հետ, որը եթէ խելացի, կանոնաւոր, ժամանակին մշակվի և խնամվի, կարող է ընդմիշտ ապահովել նրա ընտանիքի տանելի վիճակը և բոլոր անյետաձգելի պահանջները։

Գաւառական թատրոնի դռներն էլ փակվեցին։ Շնորհիւ Ոսկանեան ամուսինների բեղմնաւոր գործունէութեան, ամառվայ ընթացքում ունեցանք մի շարք կանոնաւոր ներկայացումներ։

Գաւառական տանջված, նահատակված բեմն այս տարի էլ ազատ չը մնաց գանագան անկոչ, անշնորհք և անբարեխիղճ դերասանների անտեղի «բենեֆիսներից» և անարժէք «դեբիւտներից»։

Թատրոնական սեզոնը վերջացաւ Վ. Փափազեանի «Ժայռ» պիեսի փառաւոր տապալումով, որը յայտարարութեան համաձայն տրվում էր «հեղինակի անմիջական հսկողութեամբ»։ Հեղինակի, որ տեղից ոչ միայն հազարաւոր վերստերով հեռու էր գտնվում, այլ և երազել, երևակայել անգամ չէր կարող, որ մի յայտնի ամարանոցում, գիտակից հասարակութեան առաջ կատարվելու է մի մինչև օրս չը տեսնված և չը լսված ստոր խաքերայութիւն...

Ամարանոցաւորներն անչափ ուրախ, անհոգ տրամադրութեամբ եկան, բայց անծայր դժգոհ, չափազանց ճնշված հեռացան։

Ամարանոցում գոյութիւն ունեցող մի շարք պակասութիւնները վերացնելու համար ոչ մի միջոց, աշխատանք և ջանք չը գործադրվեց։

Չուելու ազդանշանը տուեց մեր կենսուրախ աշակերտութիւնը, ապագայ գիտակից հասարակութեան ավանգարդը, թողնելով իր հետքից դառն յիշողութիւններ։ Աննպատակ, անմտօրէն վատնած ժամանակ... Պարերեկոյթներում և հասարակական շրջաններում ցոյց տուած անարժան, անվայել վարք ու բարք... Անթոյլատրելի արկածներ... Գիշերային կասկածելի էքսկուրսիաներ... խրախճանքներ, որոնք ամենայն ճշտութեամբ յիշեցնում էին Վէրբիցկայայի «Вавочка» վէպի նման սև էջերը...

Բարոյականութիւնն ոչ մի շրջանում այնքան չէ ընկած, ստորացած, որքան մեր մատաղ սերունդի մէջ։

Ո՞վ պէտք է նրան ազատի այդ օրհասական անկումից։

Ժամանակակից ընտանիքը։ Բայց նա դեռ ևս անպատրաստ է։

Ժամանակակից դպրոցը։ Ներկայ պայմաններում զրկված է այդ հնարաւորութիւնից։

Ժամանակակից հասարակութիւնը։ Նա էլ չափազանց անտարբեր է այդ խնդրում։

Մ. Ղազարեան

Մեծ-Ղարաքիլիսա

## ԿԱՐՍԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՎԱՐԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎՆԵՐԸ

—

Կարս, 10 սեպտեմբերի

Ընդհ. ժողով նշանակվեց այս տարի մայիսի 20-ին, օգոստ. 26-ին և սեպտ. 9-ին։ Այո, երեք անգամ ժողով է նշանակվել և երեք անգամ էլ, զանազան տեսակ իրաւացի և անիրաւացի պատճառաբանութիւններով՝ առանց ցանկալի նպատակի հասնելու, ցրվել են ժողովականները, սպասելով հետևեալ նոր ժողովին։ Ա. և Բ. ժողովների մասին զանց առնելով և երկարաբանութիւնից խոյս տալով, պարտ եմ համարում մի քանի խօսք ասել ամսիս 9-ին կայացած բազմամարդ ժողովի մասին։

Ուղիղ մի ժամ անտեղի վիճաբանութիւնից յետոյ, գաղտնի քուէարկութեամբ հազիւ ընտրեցին նախագահ Ե. Պետրոսեանին, որը սովորական մի փոքրիկ առաջաբանից յետոյ բացեց ժողովը։ Տիրում էր խորին խաղաղութիւն, բայց բոլորը յուզված, լարված և նախապատրաստված՝ կարծես սպասում էին մի առիթի, մի ազդանշանի, որ մութ ակնարկութիւններով լի՝ սկսէին իրանց յարձակողական ճառերը։

Ս. Գրիգորեան, որպէս վերստուգիչ մասնաժողովի անդամ, իր ճառում շեշտեց այն, որ այս տարի բանկի ներքին կեանքը փոթորկալից է եղել, գործավարութիւնը քաոսային դրութեան մէջ է, մատեանների և գործերի մէջ բազմաթիւ անճշտութիւններ են մտել, ծառայողները իրանց կոչման համապատասխան չեն, հիմնարկութեան մէջ իրար հայհոյում, ծեծում, արիւնլիրկ անում։ Տարրական կարգապահութեան բացակայութեան պատճառով՝ բանկի գործերը մնացել են ամենախայտառակ դրութեան մէջ և այլն։ Ճառախօսն իր ասածները ապացուցանելու համար առաջ բերեց մի շարք անհերքելի փաստեր։

Վերստուգիչ մասնաժողովի զեկուցման մէջ կը պատահէք այսպիսի նախադասութիւններ. «Այս հիման վրա առանձին մասնաժողովը ընտրեց առանձին մի ենթաժողով, որը ոչ միայն պարզեց վերստուգող մասնաժողովիս մայիսի 20-ին նըկատած թերութիւններն ու թիւրիմացութիւնները, այլ և բաց արեց աւելի շատ պակասութիւններ, շեղումներ ու անճշտութիւններ։ Թէ վերստուգող մասնաժողովիս և թէ ենթաժողովի գտած շեղումներն ու պակասութիւնները ստուգելով՝ ակնյայտ դարձաւ, որ այդ բոլորն այժմ ուղղված են և համապատասխան այն բոլոր տեղեկութիւններին, որոնք գտնվում են ընկերութեան գործերի մէջ. ահա այս պատճառով հաշիւների մէջ կարևոր ուղղումները մտցնելուց յետոյ կարելի է հաստատել։ Իսկ ինչ վերաբերում է մասնաժողովիս միւս մնացած նկատողութիւններին, որոնք առանձին զեկուցումով մայիսի 20-ին ներկայացված էր ընդհանուր ժողովին, թէ գործերը և թէ հաշիւները վարելու մասին, մասնաժողովս մի քանի ստուգութիւններ ու այցելութիւններ անելով՝ եկել է այն եզրակացութեան, որ ընկերութեան մէջ դեռ ամեն ինչ կարգին չէ»։

Նոյն ընկերութեան խորհուրդը ընդհանուր ժողովին ի միջի այլոց գրում է. «1911 թւի ընթացքում մեր բանկի ներքին կեանքի ընթացքը չափազանց տխուր էր և լի թիւրիմացութիւններով, խռովութիւններով, հետևաբար խորհուրդս դեռ հաշուետւութեան տարվայ առաջին կիսամեակի վերջերում նկատել էր ընկերութեանս հաշւապահութեան և գործավարութեան մէջ թերութիւններ և փորձառու, գիտակ, ղեկավար ձեռքի բացակայութիւն։ Ի նկատի ունենալով ընկերութեան գործերի այս տեսակ անբնական դրութիւնը՝ խորհուրդս ամենախիստ և կտրուկ միջոցների դիմելով ձեռնարկեց գործերը կարգի բերելու և բանկի ներքին կեանքը խաղաղեցնելու, բայց ցաւօք սրտի խորհուրդս յայտարարում է, որ վարչութիւնը իր խոստումները չարդարացրեց ու հաշւապահութեան, գործավարութեան վատ կողմերը մնացին սառուցման կէտի վրա։ 1911 թւի համար վերստուգիչ մասնաժողովի նկատած բոլոր թերութիւնները խորհուրդս ընդունում է իբրև կատարված փաստեր....։ Ընկերութեանս գործերի ներկայ ցաւալի դրութիւնը առաջացել է ընկերութեան և վարչութեան անդամների ընտրելու ժամանակ թեթև և անհոգ վերաբերվելուց, եթէ ոչ վարչութեանս մէջ չէին ընկնի տեսականապէս և գործնականապէս բոլորովին անպատրաստ անձինք։ Վերջապէս խորհուրդս քաղցր պարտականութիւն է համարում շնորհակալութիւն յայտնել վերստուգող մասնաժողովի անդամներին իրանց անխոնջ գործունէութեան համար»։

Այս պաշտօնական արձանագրութիւնները ներկայացնելուց յետոյ, ի հարկէ, աւելորդ է իմ կողմից զանազան տեսակ դատողութիւններով պախարակել կամ գովաբանել բանկի գործունէութիւնը։

Վերջապէս հաստատվեցին 1911 թ. հաշիւները և 1912 թ. նախահաշիւը, որից երևաց, որ 1911 թ. բոլոր ծախքերից դուրս բանկը 20,000 ր. զուտ աշխատանք է ունեցել։ Այդ աշխատանքի 10$^0/_0$-ը յատկացրին բարեգործական նպատակների, իսկ մնացածը բաժանեցին անդամներին։ Բոլոր հարցերից յետոյ, երբ հերթը հասաւ վարչութեան անդամների ընտրութեան, ահա այդ ժամանակ բարձրացաւ աղմուկ, նախագահի ձայնը և նրա զանգի զընգզընգոցը կորաւ խառնաշփոթութեան մէջ։ Ժողովականները և լարված էին, և քաղցած, և յոգնած, ուստի նախագահը խելացիութիւն համարեց փակել ժողովը և նոր ժողով նշանակել ընտրութեան համար սեպտեմբերի 16-ին։

Սարիբէկ Տէր-Մելքիսեդեկեան

ինձ հետ գտնվում էր Էջմիածնում, կաթողիկոսական ընտրութեան առիթով, ուստի ականատես չէ եղել դեկտեմբերեան սոսկալի դէպքերին. աւելի լաւ է ականատեսներից տեղեկանալ։

— Այսօր, անշուշտ, շատերը կը գան ձեզ այցելութեան, և դուք նրանցից կիմանաք մանրամասնութիւնները։

Եւ, ճշմարիտ, նոյն օրը երեկոյեան սկսւեցին այցելութիւնները։ Այցելուներից շատերը հօրս կամ իմ հին ծանօթները և բարեկամներն էին, կային և նորերը, ինձ անծանօթներ, բայց որոնց հայրերին ես ճանաչում էի։ Ահա պատկառելի և յարգելի միրփէնջ (գեն.-լէյտենանտ) Մատուր-խանը, մեր ընտանիքի կնքահայրը, մօտ 80 տարեկան մի համակրելի ծերունի, որ, չը նայելով իր հասակին, դեռ պահպանել է իր աշխուժութիւնը, կորովը և իմացականութիւնը։ Նա Պարսկաստանի հայ պետական գործիչների մէջ ամենահինն է և ամենաերախտաւորը (заслуженный)։ Ահա և Աւագ-խան Աֆթանդիլեանը, «Մշակի» նախկին բեղմնաւոր թղթակից «Արմենակը», Րաֆֆիի մօտ բարեկամը և կենսագրողը։ Ահա և դոքտոր Պետրոս Ասլանեանը, Թաւրիզում յարգված բժիշկներից մինը և «Աղքատախնամի» նախագահը, Թիւրքահայ, յայտնի իր փորձառութեամբ, գիտութեամբ և ազգային շահերին ծառայելու պատրաստականութեամբ։ Ահա և միշտ զուարթ, միշտ կենսուրախ, միշտ ջահել Աւագ-խան Աւագեանը, որի ընդարձակ և մթերքներով լի մագազինը թալանել են Րահիմ խանի նոքարները և որի մասին պատմում են, թէ՝ երբ թուրք ծառան եկաւ գուժելու, թէ, «խան, ամբողջ մագազինը թալանել են», լսելով այդ լուրը, որ մի րոպէում դարձնում էր նրան հարուստից՝ աղքատ, նա, փիլիսոփայական համբերութեամբ, պատասխանում է ծառային. «էհ, ինչ արած, Ալլահը ողորմած է, գնա սամօվարը դիր, թէյ խմենք»։ Ահա և դոքտոր Ժօրժը, մի ասորի բժիշկ, միշտ ուրախ, համակրելի և նոյնպէս յարգված ու սիրված բժիշկներից մինը և ընտանեցած հայերի հետ մտերմական կապերով։ Ահա և երիտասարդ Ստեփան-խան Եղիազարեանը, Թաւրիզի մաքսատան կառավարչի օգնականը, նոյնպէս մի շատ յարգված և սիրված անձնաւորութիւն։ Ահա և Մարտիրոս Նազարբէգեանը, ռուսական բանկի կառավարիչի օգնականը, և Մելքոն Շահբազեանց, նոյն բանկի պաշտօնեայ, երկուսն էլ անկեղծ, համոզված մշակականներ։ Ահա և Արամեան դպրոցի հոգաբարձուները։ Ահա և նոյն դպրոցի տեսուչ Ալէքսան Տէր-Վարդանեանը, «Միտք» շաբաթաթերթի խմբագիր-հրատարակիչը, որին առաջին անգամն էի տեսնում, նոյնպէս մի կենսուրախ, եռանդուն երիտասարդ, և ուրիշ շատեր, որոնք գալիս էին իրանց ուրախութիւնը յայտնելու իմ Թաւրիզ գալու առիթով։ Այցելութեան եկաւ և տեղական քահանան՝ տէր Համազասպը—որի մէջ ես ճանաչեցի մեր հարևանի որդի այն Անանիային, որի հետ մանկութեանս օրերում խաղում էի—և առաջնորդական փոխանորդ տէր Կարապետ Մանուկեանը, մի Թիւրքահայ քահանայ, որ, ինչպէս շուտով կը տեսնենք, աւելի մեծ հաստատակամութիւն է ցոյց տալիս դաշնակցականների կողմից կատարված ոտնձգութիւնների ընդդիմադրութեան մէջ, քան առաջնորդ Կարապետ եպիսկոպոսը ցոյց է տուել։

Բնականաբար, այդ այցելուների հետ մեր խօսակցութեան գլխաւոր առարկան՝ Թաւրիզում տեղի ունեցած դէպքերն էին յեղափոխութեան օրերին և ռուսաց զօրքերի գալուց յետոյ, ինչպէս և հայ դաշնակցականների կատարած դերի և սխրագործութիւնների պատմութիւնը։

Ես կաշխատեմ ճշտութեամբ արձանագրել մեր խօսակցութիւնը և ինձ պատմածները։

Հ. Առաքելեան

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Թիֆլիսի նահանգապետը նշանակել է հետևեալ ժամանակամիջոցը Պետական Դումայի ընտրութիւնների համար Թիֆլիսի նահանգում ընդհանուր տեղական կուրիայի կողմից. բոլոր գաւառների շինական ժողովների լիազօրների ընտրութիւնները՝ սեպտեմբերի 16-ին, շրջանային շինական ժողովների լիազօրների համագումարը սեպտ. 20-ին, հողատէրերի համագումարները՝ սեպտ. 30-ին, քաղաքային ընտրողների լիազօրների համագումարները՝ հոկտ. 3-ին և Բորչալուի ու Գորու բանուորների լիազօրների ընտրութիւնները՝ սեպտեմբերի 10-ին, իսկ այդ լիազօրների համագումարը՝ սեպտ. 30-ին։ Ռուսական կուրիայի կողմից՝ Ախալքալաքի, Բորչալուի, Գորու, Սղնախի և Թիֆլիսի գաւառներում գիւղերի լիազօրների ընտրութիւնները սեպտեմբերի 23-ին։

◆ Թիֆլիսում պոլիտեխնիկում հաստատելու հարցի գլխաւոր կոմիտէն ի միջի այլոց որոշեց միջնորդութիւն յարուցել Կովկասի Փոխարքայի առաջ՝ թոյլատրելու ձեռնարկել պոլիտեխնիկումի կառուցմանը, հէնց որ Կովկ. ուսումն. շրջանի հոգաբարձուն նախագիծ ներկայացնէ և այդ նախագիծը հաստատվի Փոխարքայից։

◆ Կովկասում բարձր կրթական հաստատութիւն հիմնելու գործի համար մինչև օրս կամաւոր նուիրատւութիւններ ստացվել են ընդամենը 34,135 ր. 59 կ.։

◆ Անդրկովկասի ռուս ազգաբնակութեան կողմից Պետական Դումայի պատուիրակներ ընտրող ժողովում նախագահելու է պետական բանկի Թիֆլիսի գրասենեակի կառավարիչ կամերհէր Բէզօբրազովը։

◆ Հայոց Դրամատ. Ընկերութեան վարչութիւնը 1912—13 թ. թ. սեզոնի րեպէրտուարի մէջ մտցրել է նաև ուսանող Լ. Քալանթարի մի ինքնուրոյն դրամատիկական գրուածքը «Ծանր երազ» անունով, 4 գործողութեամբ։ Պիէսի փաբուլան վերցված է ժամանակակից հայ ինտելիգենցիայի կեանքից։

◆ Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձու Ռուդոլֆը սեպտեմբերի 11-ին մեկնեց Բագու և Դաղստան։ Նրա բացակայութեան ժամանակ հոգաբարձուի պարտականութիւնները կատարելու է Ռուդոլֆի օգնական Լօպատինսկին։

◆ Բակտերիօլօգիական քննութիւնը ցոյց տուեց, որ Թիֆլիսի ջրանցքի ջուրը տիֆի բացիլներ չէ պարունակում իր մէջ։

◆ Այսօր քաղաքային վարչութիւնը իրաւաբան-ձայնաւորների մասնակցութեամբ վերջնականապէս կը խմբագրէ Թիֆլիսում գազային լուսաւորութիւն մտցնելու մասին կապված պայմանագիրը։

◆ Այսօր Թիֆլիս կը հասնէ Մօսկվայի բարձր կրթական հաստատութիւնների դասախօս Այխէնվալդը երեք դասախօսութիւն կարդալու համար։ Առաջին դասախօսութիւնը տեղի կունենայ վաղը Ազնուականութեան թատրոնում Չեխովի մասին։

◆ Թիֆլիս է եկել աշխարհի շուրջը ոտով ճանապարհորդող բուլղար Ստեփան Պապանօվը, որ արդէն անցել է Ռումինիան, Աւստրիայի արևելեան մասը, Ռուսաստանի արևմտեան նահանգները մինչև Պետերբուրգ և այստեղից Օդեսսայի, Նովօրոսիյսկի, Փօթիի և Բաթումի վրայով հասել է Թիֆլիս։ Թիֆլիսից Պապանօվը Մօսկվայի վրայով կերթայ Արխանգելսկ, Նորվէգիա, Շվէցիա, Դանիա, Գերմանիա, Բէլգիա, Նիդէրլանդիա և Ֆրանսիա։ Պապանօվը գիտէ վեց լեզու։

◆ Թիֆլիսում գոյութիւն ունեցող Միխաբօվայի խոհարարական գործնական ուսումնարանը, ինչպէս յայտնում են մեզ, իր 4-ամեայ գործունէութեան ընթացքում տուել է խոհարարական մասնագիտութեան մէջ գործնականապէս ընտելացած և իւրացրած մի շարք ընթացաւարտ-կանայք։ Ներկայումս տ. Միխաբօվան միջնորդութիւն է յարուցել առևտրի և արդիւնաբերութեան մինիստրութեան առաջ՝ իր խոհարարական ուսումնարանն ընդունելու յիշեալ մինիստրութեան իրաւասութեան ներքոյ, որպէսզի ընթացաւարտները վարժուհու պաշտօնով կարողանան դասաւանդել կանանց միջնակարգ դպրոցներում, որոնց վերաբերեալ կարգադրութիւն է եղած լուսաւորութեան մինիստրութիւնից՝ խոհարարական գիտելիքներն ևս դասաւանդելու այդ դպրոցներում։

◆ Թաւրիզի մեր թղթակիցը սեպտեմբերի 8 ից մեզ հաղորդում է, թէ այնտեղ սեպտեմբերի 7-ին Ատրպատականի թեմի առաջնորդ է ընտրվել Ներսէս վ. Մելիք-Թանգեանը, որ Էջմիածնի կողմից ուղարկվել էր Թաւրիզ՝ Ատրպատականի թեմակալ առաջնորդի ընտրութիւնը կայացնելու նպատակով։ Ընտրութեան մանրամասնութիւնները կը տանք «Մշակի» վաղվայ համարում։

◆ Բագուի միլիօնատէր Թաղիեվի գործը՝ ինժ. Բէհբութովին տանջելու մեղադրանքի մասին՝ կը քննվի Թիֆլիսի դատաստանական պալատում սեպտեմբերի 21-ին։

◆ Բագւում միապետականները Պետական Դումայի անդամի պաշտօնի համար պաշտպանում են Թիֆլիսի նախկին նահանգապետ երդ.-հաւ. Բըկօվի թեկնածութիւնը։

## ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԹԵՐԹԵՐԻՑ

—

◆ Յօբելեանական հանդէսների արձագանքները.—Ն. Կ. Մեծութիւնը նուիրել է իր սեփական միջոցներից Մօսկվայի ամենաչքաւոր բնակչութեանը 15,000 րուբլի։

◆ Պրոֆ. Շէրշէնևիչը.—Օգոստ. 31-ին Մօսկվայում վախճանվեց Շանեավսկու համալսարանի պրոֆէսոր Գ. Ֆ. Շէրշէնևիչը քաղցկեղից, 47 տարեկան հասակում։ Ամենքից սիրված ու գերազանցօրէն գնահատված այդ շնորհալի պրոֆէսորը կարդում էր «Իրաւունքի հանուր տեսութիւնը»։ Հանգուցեալը ցանկութիւն է յայտնել թաղվել Մուրոմցովի կողքին։

◆ Գեներալ Նօգիի անձնասպանութիւնը.—Տօկիօյից հեռագրում են սեպտ. 1-ին, որ ճապօնական միկադոյի մարմինը դուրս հանելուց առաջ կայացաւ պետական բարձր անձնաւորութիւնների խորհուրդը, որին ներկայ էր և գեներալ Նօգին։ Այդտեղ որոշվեց, որ, համաձայն նախնի աւանդութիւնների, հասարակութեան հերոսական ոգին բարձրացնելու համար օտարականների աչքին, և միկադոյի սիրուց գլխաւորներից մէկը պէտք է կատարի իր վրա խարակիրի (իր փորը կտրելը)։ Վիճակը ընկաւ գեն. Նօգիին, և նա ու իր կինը զոհեցին իրանց անձը։ Նօգիի մասին պատմում են, թէ երբ Անգլիայից շնորհաւորեցին նրան Պորտ-Արտուրի առումը, նա պատասխանեց. «Այն մարդը, որ առել է Պորտ-Արտուրը բազմաթիւ ամիսներ պաշարելուց յետոյ ու զոհել է 90,000 զինուոր, արժանի չէ շնորհաւորանքի»։

◆ Ցիմմերմանի արած քայլը.—Օպերային յայտնի անտրպրենեօր Ցիմմերմանի բանտարկվելը Նիժնի-Նովգորոդում յայտնի է ընթերցողներին։ Այժմ դրա դատը յանձն է առել յայտնի մի իրաւաբան։ Գործը տարվում է երկու ուղղութեամբ. դատի ենթարկելու և չորրորդ Պետական Դումային հարց առաջարկելու։

◆ Իշխանական հոգատարութիւն.—Մօսկվայի Պատմական թանգարանի նախագահ ընկեր իշխ. Ն. Ս. Շչերբատովը՝ իբրև մեցենատ իր ստորադրեալների եռանդուն գործունէութեան համար՝ ձեռք է բերել նրանց համար... 50 տեղ Վագանկովեան հանգստարանում։

Ստորադրեալները շնորհակալութիւն յայտնեցին իշխանին՝ նրա անչափ հոգատարութեան համար, բայց, ի հարկէ, ցանկանալով քիչ աւելի բաւականութիւն ստանալ կենսական բարիքներից. իսկ տեղ փնտռելու մասին չեն շտապում։

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Կրասնովօդսկ, 29 օգոստոսի

«Մշակի» այս տարվայ № 187-ում ուսուցիչ Մ. Դաբբինեանի տուած հարցերին ահա իմ պատասխանը.

Կրասնովօդսկի դպրոցի հոգաբարձութիւնը կարիք ունենալով հայոց լեզուի և երգեցողութեան ուսուցչի՝ յայտարարութիւն է տալիս, որտեղ շեշտում է, որ ցանկացող ուսուցիչները թող իրանց վկայականով դիմեն հոգաբարձութեանս։

Մ. Դաբբինեանը մինն էր այն չորս ուսուցիչներից, որոնք մոռացել էին խնդրագրի հետ ուղարկել նաև ուսման վկայական։ Արդ՝ հոգաբարձութիւնը ընդունում է նրա խնդիրը, բայց տեղեկութիւն չունի նրա վկայականի մասին. դիմում է իրան, որ ուղարկէ իր վկայականը։

Մինչ այդ՝ թեկնածուներից մէկի, որին հոգաբարձութիւնս առաջնութիւն էր տուել խմբապետութեան և երգեցողութեան պատճառով, վկայականը մեզ է հասնում, յետ այնու այդ ուսուցչին գրվում է հրաւիրաթուղթ։

Ուսուցչի հարցը վերջացրած համարելով մասնաւոր գործով գնում եմ Բագու։

Իմ և միւս բոլոր հոգաբարձուների բացակայութեան ժամանակ ստացվում է Մ. Դաբբինեանի վկայականը, որը մնում է փակ՝ մինչև իմ վերադառնալը։ Վերադառնալուց շտապում եմ յետ ուղարկել նրա վկայականը և յայտնել իրողութիւնը։

Անդամ հոգաբարձութեան՝

Ս. Բալայեանց

—

Ստաւրօպօլ, 23 օգոստոսի

Ամիսներ առաջ ձեռնարկել եմ հրատարակել հայոց եկեղեցու պատարագի արարողութեան թարգմանութիւնը ռուս լեզուով։

Նոյն ձեռնարկութիւնս յայտնի էր թէ տեղիս բարեկամներիս և թէ Տեբերդա ամարանոցում ամարանոց եկած ռոստովաբնակ հարեան հայերին, որոնցից մէկի օգնութեամբ գտել էի նաև հրատարակիչ վերոյիշեալ աշխատութեանս համար։

Ներսէս քահ. Հերթեցեանը, հաւանական է լսելով որ ես ձեռնարկել եմ վերոգրեալ թարգմանութեան, շտապել է «Մշակի» № 166-ում ի միջի այլոց յայտարարել, որ պատրաստ է տպագրութեան համար «Чинъ литургіи Апостольской Армянской Церкви», անշուշտ կամենալով ինձ յետ կասեցնել սկսած մտադրութիւնից և ամիսների աշխատանքս ապարդիւն դարձնել։

Յայտնում եմ ի գիտութիւն ամենի, որ աշխատութիւնս վաղուց վերջացած է և արտագրութիւնից յետոյ մօտիկ ապագայում ուղարկվելու է Վեհափառ Հայրապետին՝ տպագրութեան թոյլտւութեան համար։

Համոզմունքս է. որքան շատ նման թարգմանութիւններ լինեն, այնքան աւելի նպատակին հասած կը լինենք։

Ս. ք. Տէր-Յովհաննիսեանց

## ԱԿԱՄԱՑ ՊԱՏԱՍԽԱՆ

—

Բագու, 5 սեպտեմբերի

Իմ թղթակցութիւններիս մէջ, որոնք պարբերաբար տպագրվում են «Մշակի» էջերում, ես առհասարակ խոյս եմ տալիս որևէ անձնաւորութիւն կամ հիմնարկութիւն վիրաւորելուց, ինչպէս այդ կարող է նկատել ամեն մի ընթերցող։

Ես վերցնում եմ միայն փաստը՝ ինչպէս որ նա կայ, ինչպէս որ յայտնի է հասարակութեանը և բոլորովին էլ կարիք չեմ զգում քրքրելու արխիվները, կամ գրասենեակների հաշիւներն ու տեղեկագրերը, որովհետև, իմ կարծիքով, գրելու, ասելու և անելու միջև շատ մեծ տարբերութիւններ կան։

«Հայկական ներկայացումները» թղթակցութեանս մէջ ես վարվել եմ նոյն կերպ խօսելով Բ. Հ. Կուլտ. Միութեան գեղարուեստական սեկցիայի մասին։

100,000 բիւջէի անուն տալով ես միայն սեկցիան չեմ աչքի առաջ ունեցել, այլ ամբողջ Կուլտուրական Միութիւնը, և մեղադրել եմ նրան անգործութեան մէջ թատրօնական գործունէութեան վերաբերեալ, այլ ոչ ուրիշ ճիւղերի, որոնց մասին ես բոլորովին չեմ էլ խօսել, թողնելով նրանց յարմար առիթի։

Իսկ այդ գործունէութիւնը հասարակութեան առաջ է և կարիք չը կայ դիմելու հաշիւների ու գրքերի օգնութեանը, այն էլ Միութեան գրասենեակում, ուրեղ հրաւիրում են ինձ նրանք «Մշակի» № 195-ում։

Ես խօսել եմ անցեալ սէզօնի մասին և ոչ 6 տարվայ գործունէութեան (չը նայած որ այդ 6 տարվայ ընթացքում էլ սեկցիան, եթէ չասենք ոչինչ, շատ քիչ բան է արել)։ Իսկ աղաղակող փաստերը ահա թէ ինչ են ասում այդ սեզօնին սեկցիայի ունեցած գործունէութեան մասին։

Փտած և արխիվից հանված «Շուշանիկ» պիէսի խայտառակ ներկայացումը յունվարին և «Լէյլէբիջի» օպերետի միանգամայն անպէտք և ոչ կարևոր ներկայացումը, որի մասին մենք խօսել ենք իր ժամանակին և որի վրա սոսկալի ծախսեր էր արել սեկցիան, և... ուրիշ ոչինչ։

Ահա այս է սեկցիայի «ույժերի ներածին չափ գործելը» անցեալ սեզօնին, որի վրա և մենք կանգ էինք առել մեր թղթակցութեան մէջ։

Ինչ վերաբերում է այս սեզօնի համար սիրողներից խումբ կազմելուն, այդ արդէն թոյլ տուէք ասելու, որ «послѣ ужина—горчицы» է։

Այն ժամանակ, երբ Բագւում ոչ մի խումբ չը կար և ասպարէզը մնացել էր գեղարուեստը շահագործողներին, և Միութեան սրբազան պարտականութիւնն էր կռւել այդ չարիքի դէմ, նա ինքն է շահագործողի դեր ստանձնում իր վրա «Շուշանիկներով» ու «Լէյլէբիջիներով», իսկ երբ յայտնի է արդէն, որ տ. Սիրանոյշը դերասանական խումբ է կազմում Բագուի համար, այն ժամանակ նա էլ սկսում է սիրողներից խումբ կազմել...

Ինչու։

Միթէ տ. Սիրանոյշի խմբի հետ մրցելու համար։

Ահա Կուլտուրական Միութեան գեղարուեստական սեկցիայի իսկական, իրական գործունէութիւնը ինչպէս որ նա կայ, ինչպէս որ նա դրված է հասարակութեան առաջ, որը կարելի է և պէտք է պարզ տեսնել, այլ ոչ Միութեան տեղեկագրերի վարդագոյն պրիզմայի միջով, և որի վրա էլ մենք կանգ էինք առել։

Dixi. Վաղարշակ Թումանեան

## ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Թիւրքաց արտաքին գործերի մինիստր Նորատունկեան էֆէնդին «Р. Сл.»-ի թղթակցին յայտնեց, որ Բ. Դուռը համոզված է, թէ մեծ պետութիւնները չեն միջամտի Թիւրքաց ներքին գործերին։

◆ Սերբիան բոպէ առ բոպէ սպասում է, որ Բօլգարիան պատերազմ յայտարարէ Թիւրքիային, որպէսզի ինքն էլ միանայ Բօլգարիային։

◆ «Indep. Belge»-ի կարծիքով Թիւրքիան անկարող է իրագործել խոստացած բարենորոգումները քրիստոնէական վիլայէթներում։ Բաւական է մի ցնցում ևս — Թիւրքիան կորցնելու է իր լաւագոյն նահանգները։

◆ Կ. Պօլսի ռուսաց դեսպան Գիրսը բարեկամական խորհուրդ տուեց Բ. Դրան շտապեցնել բարենորոգումների գործադրութիւնը՝ Բալկանեան լարված դրութեանը վերջ դնելու նպատակով։

◆ «Н. В.»-ն հաղորդում է, որ Թիւրքաց կառավարութիւնը վերջացրել է բարենորոգումների նախագիծը, որ բաւական հանգստացնելու է բօլգար և սերբ ազգաբնակութեան։ Շուտով այդ նախագիծը հրատարակութեան կը տրվի։

◆ Մինիստր Սազօնովի առաջարկութեամբ Պարիզի ռուսաց դեսպան Իզվօլսկին մեկնեց Լօնդօն մասնակցելու առաջիկայ խորհրդակցութիւններին։

◆ Խաղաղութեան միջազգային կօնգրէսին Ռուսաստանը և Անգլիան կըտրական քայլեր են անելու յօգուտ խաղաղութեան։

◆ Տօկիօյում կայսրի մահից յետոյ կազմվեց մարդասպանների ակումբ, որի անդամները ինքնասպանութիւն են գործում խարակիրայի միջոցով։ Դեղատներին կարգադրված է թոյն չը վաճառել։

◆ Վիէննայում ժողովվել են բոլոր զօրաբանակների հրամանատարները։ Ծառայութեան ժամանակը լրացրած զինւորները մնում են մայրաքաղաքում։

◆ Նիւլօվօդսկի մօտերը մորթված դրութեամբ գտնվեց մի պառաւ կին՝ Միշուրինա ազգանունով։ Պարզվեց, որ Միշուրինային մինչև սպանութիւնը բռնաբարել են 30 բանւոր։ Մինչև մինը իր վատ գործն էր կատարում, մնացածները գարմօն էին ածում, երգում և օղի խմում։

Խմբագիր՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

№4711
Fettpuder
№4711
№4711

**№4711 Ճարպային շպարը**
դաշուն քնքշացնում է, թաւշանման դարձնում եւ գեղեցկացնում։
**Ֆերդ. Միւլգենս** Պարֆիւմերիա № 4711
Արկղիկը 30 կոպ.
Մատակ. Նորին Մեծ. Ռուսաց Բ. Դրան։
2—1
(M. 309206/309233)

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

**1700 ՌՈՒԲԼՈՎ**
**ՇՏԱՊՈՎ ԾԱԽՎՈՒՄ Է**
երկյարկանի մի տուն Հավլաբարում, Նազարէվսկի Նրբափողոցի վրա, № 7, Ս. Կարապետի եկեղեցուն մօտ։ Տարեկան եկամուտն է 324 ռուբ.։ Բանակցելու համար դիմել Չերքէզօվսկայա փողոց № 34, բն. 6, երեկ. ժամը 6—8-ը։
(կ.) 687. 2—1

ՄԱԿԱՐ ՎԱՐԴԻԿԵԱՆ
**ՏԱՒԻՂ**
Մանկական ձայնագրեալ երգարան՝ դաշնակցութեամբ պիանօյի։ Գինն է 50 կ.։ Ծախվում է Թիֆլիսի բոլոր գրավաճառանոցներում, իսկ Գանձակ՝ Ժամհարեանցի գրախանութում։
(կ.) 684. 2—1

Բոլոր գրախանութներում վաճառվում են
ԱՐՏԱՇԷՍ ԱԲԵՂԵԱՆԻ
փոխադրած և կազմած (ըստ Իվանօվի, Կրուբերի և ուր.)
**ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ**
Բազմաթիւ նկարներով և դիագրամներով
1-ին մաս, 4-րդ և մասամբ 3-րդ տարվայ դասընթաց. նոր լոյս տեսաւ երրորդ տպագրութիւնը. գինը՝ 60 կ.։ 2-րդ մաս, 5-րդ տարվայ դասընթաց. գինը՝ 65 կ.։ 3-րդ մաս 6-դ տարվայ դասընթաց, գինը 70 կ.։ Նոյնի՝ «Հայրենագիտութեան ուսուցումը» . . . . 20 կ.։
Պահեստը՝ Թիֆլիս, «Գիր» գրախանութում։
(ե. հ. գ.) 671. 3—2

Լոյս տեսաւ
Յ. ՍՕԼՕՎԵԱՆԻ
**„ՍԱԽԱՌՆՈՂ ՈԳԻՆ"**
ՎԷՊ.
ԳԻՆԸ 40 ԿՈՊ.
Դիմել հեղինակին, Тифлисъ, Ремесленное училище, Акиму Соловьянцу.
—o—
Թիֆլիսի գրախանութներում գտնվում է նոյն հեղինակի՝
1) «Հայ քնարերգութեան փիլիսոփայութիւնը» . . . . . . . 50 կ.
2) «Ես տիկին ունեմ» (մանկ.) 10 կ.
Հեղինակին դիմողները ճանապարհածախս չեն վճարում։
Միւս գրուածքները սպառված են։
(հ.կ.) 674. 10—2

Լոյս է տեսել և վաճառվում է բոլոր գրավաճառների մօտ
Մի խումբ ուսուցիչների
**Ուղղագրական ձեռագիր օրինակներ**
(երկրորդ տպագրութիւն)
ԳԻՆԸ 20 ԿՈՊԷԿ։
Պահեստը «ԳԻՐ» և «ԳՈՒՏԵՆԲԵՐԳ» գրավաճառանոցներում։
(ե.հ.կ) 672. 4—2

**ԴԻՒԲՈՒԱՅԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻՑ** Պարիզում.
**ԵՕԴԻՐԻՆ բժիշկ ԴԷՇԱՆԻ**
(Iodhyrine du d-r Deschamp)
Շատ ընդունված միջոց
**ՉԱՂԱՆԱԼՈՒ ԴԷՄ**
որ խորհուրդ են տալիս բժիշկները, փառաւոր հետեւանքներով։ Բժշկապետ Դէշանի Եօդիրինը նշանաւոր միջոց է համարվում չաղութեան դէմ. Նրա աջող ներգործութիւնը նկատվում է հէնց բժշկութեան սկզբում։
Բժշկապետ Դէշանի Եօդիրինը բոլորովին անվնաս է օրգանիզմի համար։
Հեռացնում է չաղութիւնը աստիճանաբար շատ կարճ ժամանակամիջոցում։
Արկղիկը, որ պարունակում է 60 դեղհատ, արժէ 4 ր. 25 կոպ.։
Ծախվում է բոլոր դեղատներում և դեղատնային խանութներում։
Ընդհանուր ներկայացուցչ. Ռուսաստանում Торг. Домъ Люксембургъ и К-о, Варшава, Журавья, 40.
(B. 47056) 8—1

Լոյս տեսաւ
Մ. ԱԲԵՂԵԱՆԻ
**Աշխարհաբարի շարահիւսութիւն**
Գինն է 1 ր. 50 կոպ., իսկ նոյն հեղինակի «Աշխարհաբարի քերականութեան» հետ միասին 1 ր. 80 կոպ.։ «Աշխարհաբարի քերականութիւն», առանձին 75 կոպ.։ Նոյն հեղինակի՝ «Տարրական քերականութիւն», 3-րդ տպագրութիւն, գինը 35 կոպ.։
Դիմել՝ Թիֆլիս, «Գիր» գրախանութին։ Հեղինակի հասցէն՝ Էջմիածին, Ճեմարան։
(կ.) 673. 2—1

Учредителя Бухгалтерскихъ Курсовъ
**Н. В. Абраамяна,**
вышли изъ печати и поступили въ продажу:
I
**Руководство торг. бухгалтеріи**
въ связи съ керосинов. производствомъ (2 изд. допол. и исправл.) Ц. 2 р. 50 к.
II
**Таблица вычисл. процентовъ**
отъ 1 до 360 дн. отъ $^{1}/_{4}$ до $12^{0}/_{0}$ и на всѣ капиталы отъ 1 до 10,000 р. (2 изд.) Ц. 85 к.
III
**Общедоступная справочн. книжка**
для слушателей и слушательницъ бухгалтерск. курсовъ (2 изд.) Ц. 30 к.
IV
**Журнальныя статьи**
для опредѣл. дебета и кредита. Ц. 75 к.
V
Առևտրական հաշւապահութիւն
(հայերէն)
երկաթ., բանկ., կօլօնիալ և բամբակէ առևտրի վերաբերեալ։
Այս վերջին գիրքը լոյս կը տեսնի սեպտեմբ. վերջերին։ Նրանք, ովքեր կը կամենան ունենալ այս գիրքը, պէտք է վաղօրօք բաժանորդագրվեն։
Յիշեալ հրատարակութիւնների պահեստը Թիֆլիսում, հեղինակի մօտ, Նիկօլայէվսկայա փող. № 22.
(հ.կ.) 663. 10—2

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ՀՐ. ՅԱԼԵԱՆ
**ՀԱՇՏՈՒԹԻՒՆ**
(Պատմուածք)
Գինն է 30 կոպ.
—o—
Նոյն հեղինակի
**ԹՇՆԱՄԻՆԵՐԸ**
(Պատմուածք)
Գինն է 15 կոպ.
Դիմել գրավաճառներին։
(օ.մ.) 667. 8—3

Торговая школа съ правами и
**БУХГАЛТЕРСКІЕ КУРСЫ**
съ программами С.-Петерб. высшихъ Коммерч. Курсовъ О-ва распр. ком. знаній
Ивана Захарьевича ТЕРЪ-СТЕПАНОВА.
Начало занятій съ 15 сентября ◆ Михайловскій пр. д. № 53.
(օ.մ.) 669. 5—3

ՆԻԿ. ՍԱՐԳՍԵԱՆ
**ԴԱՍԱԳԻՐՔ ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ**
երեք կամ չորս տարվայ դասընթաց ունեցող միդասեան դպրոց. համար
(Մարդ, կենդանիներ, բոյսեր, օդ, ջուր եւ երկիր)
Համաձայն ծրագրի, բազմաթիւ պատկերներով, գինը 50 կոպ.
**ԴԱՍԱԳԻՐՔ ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ**
հինգ կամ վեց տարվայ դասընթաց ունեցող երկդասեան դպրոց. համար
Մասն I ՄԱՐԴ և ԿԵՆԴԱՆԻ, Բ. բարեփոխած տպ. գինը 60 կ.
» II ԲՈՅՍ » » 50 կ.
Բոլոր դասագրքերն էլ կազմված են կենսաբանական ուղղութեամբ։
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ ՆԱԵՒ
1) «Կենդանիների գոյները», գինը 15 կ., 2) «Թէ ինչպէս են տարածվում սերմերը», գ. 20 կ., 3) «Թէ ինչու համար է ծաղիկը», գ. 20 կ., 4) Վիլհէլմ Բօլշէ, «Մարդու ծագումը», թարգմ. գերմաներէնից՝ գ. 40 կ.։
Դիմել գրավաճառներին։ (օ.մ.) 645. 10—5

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԵԼԻՔ
**Գեղարուեստական եւ Գիտական Ժողովածուների**
համար նիւթեր ուղարկել հետեւեալ հասցէով. С.-Петербургъ, Психо-Неврологическій Институтъ, студенту Геворку Месяну.
Առաջին գիրքը լոյս կը տեսնի աշնանը։
(կ.) 683. 2—1

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
Ս. ԳՐԻԳՈՐԵԱՆԻ եւ Մ. ՋԱՌԱՓԵԱՆԻ կազմած
**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳԻՐՔԸ**
(պատկերներով եւ քարտէզներով)։
ԳԻՆՆ Է 75 ԿՈՊ.
Գիրքը կազմված է ըստ ռուսական և ֆրանսիական նորագոյն դասագրքերի, յարմարեցրած յատկապէս ծխական դպրոցների ծրագրին։ Շուտով լոյս կը տեսնի գրքի II մասը՝ VI դաս. դասընթացք։ Պահեստը գտնվում է Թիֆլիսի «Գիր» գրախանութում և կազմողների մօտ՝ Баку, Армянское училище.
(օ.մ.) 8—5

Առևտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
**ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ**
Թիֆլիս, Միխայէլեան պր. 24/4. Տէլէֆօն № 976.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ։
Գործնական զբաղմունքները կատարվում են կուրսերում՝ Լօնդօնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձևով կազմակերպված Muster-Comptoir-ում։ Նիւթերն աւանդվում են բէլ կեանքից։ Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկեան, բանկային և գործարանական). 2) Առևտրական թւաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն). 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Թւաբանութիւն համրիչի վրա. 7) Վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղումը). բ.) ոչ-պարտադիր. 1) Օտար լեզուներ. 2) Սղագրութիւն. 3) Դակտիլլօգրաֆիա (ռեմինգտօն և այլ. և 4) Առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով։ Զբաղմունքները կատարվում են և դաս-դաս։ Ունկնդիրների թւի շատութեան պատճառով բացվում է երկրորդ զուգընթաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտարաքաղաքացիների համար։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը առ. ժամը 10—12-ը և երեկ. 4—7-ը։ Ծրագիրը և կանոնները ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում։ Կուրսերը ֆիրմաներին յանձնարարում են հաշւապահներ, օգնականներ և առևտր. այլ ծառայողներ՝ կուրսերի ընթացաւարտներից և իրանց ընդունակութեամբ աչքի ընկնողներից։ (Ընթացիկ տարում կուրսերն ունեցել են 228 ունկնդիր, որոնցից 42 հոգի իգական սեռից)։
Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութեան կանդիդատ՝
(ե. հ. կ.) 555. 0—18 Տ. ՓԻԼՕՅԵԱՆ

Թիֆլիսի կենտրոնական մասում (Պետական բանկի շինութեան կողքին), Բարօնսկայա փողոցի վրա, Մանթաշեանի տանը, № 14, բացված է
**ԿԱՀԱՒՈՐՎԱԾ ՀԱՄԱՐՆԵՐ**
**„ԼԱՍԿՈՒՏՕ"**
Միանգամայն վերանորոգված, չափազանց մաքուր սենեակներ։ Գները՝ օրական 60 կ.-ից մինչև 3 ր., ամսական 10 ռուբլուց մինչև 50 ռուբլի։ Համարները շատ յարմար են ընտանիքաւորների համար։ Էլեկտրական լուսաւորութիւն, քաղաքավարի ծառայողներ։
«Լասկուտօ» համարների ներկայ տէրն է «Ֆրանցիա» համարների նախկին տէրը ԳԻԳԻՆԱՁԷՆ։
(կ.) 662. 3—2

Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
**Առևտրական Գիտութիւնների Կուրսերում**
Նոր մեթօդով սովորեցվում են
**ՖՐԱՆՍԵՐԷՆ, ԳԵՐՄԱՆԵՐԷՆ և ԱՆԳԼԻԵՐԷՆ**
ազատ կարդալ, գրել և խօսել կարճ ժամանակվայ ընթացքում տեսական և գործնական պարապմունքների միջոցով, հանրամատչելի վճարով։ Կազմակերպվում են հասակաւորներից երեկոյեան խմբեր։ Ճամբորդական Դասընթացքներ արտասահման գնալ ցանկացողների համար։ Մանրամասն տեղեկութիւնները և ընդունելութիւնները կուրսերի գրասենեակում—ամեն օր ժամը 10-12-ը և 4—7-ը։ Միխայլովսկի պր. № 24—4.
(ա.օ.) 643. 0—8

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲ. ՄԻՆԻՍՏՐ. ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՎՈՂ
**ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ**
Ն. Ո. ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ
(Գոյութիւն ունի 1895 թ.)
Հեղինակ առևտրական հաշւապահութեան ձեռնարկի և զանազան մասնագիտական ձեռնարկների։
Տալիս է երկու սեռի անձանց մասնագիտական առևտրական գիտութիւն 4-ամսեայ դասընթացքում, ամենօրեայ պարապմունքներով։
Դասընթացքներում անցնում են. — Առևտրական և արդիւնաբերութեան զանազան ճիւղերի հաշւապահութիւն, նաւթարդիւնաբերութեան և նաւթագործութեան ճիւղի հետ միասին, զանազան մեթօդներով, կատարեալ կիրառումն կրկնակի իտալական սիստեմով և առևտր. թւաբանութիւն, առևտր. նամակագրութիւն, մուրհակային և առևտրական իրաւունքներ, քաղաքատնտեսութիւն, վատ ձեռագրի ուղղումն։
Ոչ պարտադիր առարկաներն են՝ 1) Օտար լեզուներ, 2) Ստենօգրաֆիա (սղագրութիւն) և 3) Ռեմինգտօնի վրա գրել։
Ուսուցիչները բարձր կրթութիւն ստացած մասնագէտներ են, որոնք գործնականապէս և տեսականապէս պատրաստված են ամեն մի առարկայի համար առանձին։
Վկայագրերը տրվում են մինիստրութեան թոյլատւութեամբ։
Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ից։ Խնդրագիրների ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան ժամը 9—11-ը, երեկոյեան 5—7-ը։ Ծրագիրը և կանոնները տրվում և ուղարկվում են ձրիաբար։ Դասընթացքներին կից հաստատված են քիչ պատրաստված անձանց համար առանձին պատրաստողական և լրացուցիչ դասարաններ ռուսաց լեզուի և թւաբանութեան համար։
Անձամբ և նամակներով դիմել՝ Тифлисъ, Учредит. Бухг. Курсовъ Н. В. Абраамяну, Николаевская, 22, Телефонъ 7—44.
(կ. հ. ե.) 568. 0—14

**„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ**
Վաճառվում են հետեւեալ հրատարակութիւններից

| | |
|---|---|
| 1) ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, հատոր I | գ. 1 ր. — |
| 2) ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ, Վրձինի, I և II հատորներ | 1 ր. 50 |
| 3) ՄԻ ԱՄԻՍ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ, Հ. Առաքելեանի | — 40 կ. |
| 4) ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, Լէօի, հատոր I, երկրորդ տպ. | 1 ր. 20 կ. |
| 5) ԴԷՊԻ ԱՐԱՐԱՏ, Արշ. Մխիթարեանի | — 40 կ. |
| 6) ՏՆԱՅԻՆ ԲԺՇԿԱՐԱՆ, բժշկ. Գ. Բաբեանի | |
| I հատոր, Բնախօսութիւն եւ անդամազննութիւն | 1 ր. — |
| II » Հիւանդութիւններ (վարակիչ, ներքին, կաշուի), դեղարան, բառարան | 1 ր. 60 կ. |
| 7) ԱՐԲԵՑՈՂՈՒԹԵԱՆ ԴԷՄ | — 15 կ. |
| 8) ՋԵՌՆԱՐԿ տրամաբանութեան, հոգեբանութեան, բանահիւսութեան, Հ. Առաքելեանի | — 50 կ. |
| 9) ՇԷՔՍՊԻՐ ԵՒ ԻՐ «ՀԱՄԼԷՏ» ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՒՐՆ ՈՒ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, Պետրոս Ադամեանի | 1 ր. — |
| 10) ՅՈՒՇԱՐՁԱՆ ողբացեալ Արփիար Արփիարեանի | — 40 կ. |
| 11) ՄԻ ՀՆՁԻՒՆԻՆ ՄԻ ԳԻՐ (վիպագրութիւն), Ստ. Մալխասեանցի | — 20 կ. |
| 12) ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐ, Մուշեղ եպիսկոպոսի | — 35 կ. |
| 13) ՃՈՐՏԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՅԻՍՆԱՄԵԱԿԸ, նկարներով | — 15 կ. |
| 14) ԱՆԳԼԻԱՅԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ, Թարգմ. Մ.-ի | — 15 կ. |
| 15) ՃԱՊՕՆԻԱ կամ Ծագող Արեգակի երկիրը, Գ. Ի. Շրէյդէրի | — 25 կ. |
| 16) ՄԻԼՏՕՆԻ ԿԵԱՆՔԸ եւ գրական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի | — 30 կ. |
| 17) ԳԱԼԻԼԵՅԻ ԿԵԱՆՔԸ եւ գիտական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի | — 25 կ. |
| 18) ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՀՐԱՀԱՆԳ ՀԱՆՐԱՊԱՐՏՈՒԹ, Մակ. եպ. Բարխուդարեանի | — 80 կ. |

Վերոյիշեալ 19 կտոր գրքերը, որոնց ընդհանուր արժէքն է 11 ր. 60 կ., վաճառվում են հետեւեալ պայմաններով։
Նրանք, որոնք կը դիմեն մեզ՝ պահանջելով վերոյիշեալ գրքերից մի-մի օրին դրամը կանխիկ ուղարկելով, կը ստանան $30^{0}/_{0}$ զեղչ, իսկ նրանք, որոնք վերադիր վճարով կը պահանջեն, այդպիսիներին զեղչ կը լինի միայն $25^{0}/_{0}$.
ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍԸ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՎՐԱ։ (6) 50—38

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный